ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ

HELSINKI CITIZENS' ASSEMBLY-VANADZOR

Open Society Foundations - Armenia

Բաց Հասարակության Հիմնադրամներ - Հայաստան

ԶԵԿՈՒՅՑ

2021 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ, 2022 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ 2022 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

ՎԱՆԱՁՈՐ

2023

Հեղինակային խումբ՝ Նազելի Մովսեսյան

Արմինե Սաղիկյան

Անուշ Պետրոսյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն զեկույցը պատրաստվել է Բաց հասարակության հիմնադրամներ կազմակերպության ֆինանսական աջակցությամբ:

Սույն զեկույցի մեջ արտահայտված տեսակետները, մեկնաբանություններն ու եզրակացությունները հեղինակներինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 1

ԶՈՐԱԿՈՉԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ԿԱՄ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ..... 3

2021 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ, 2022 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ 2022 ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ..... 26

2021 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ, 2022 Թ. ԱՄՌԱՅԻՆ և 2022 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ ԴԻՄԱԾ ՊԱՀԵՍՏԱԶՈՐՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԽՆԴԻՐՆԵՐԸ 57

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 45

ՀԱՎԵԼՎԱԾ 1. 2021 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ, 2022 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ և 2022 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴԻՄԱԾ ՈՐՈՇ ԶՈՐԱԿՈՉԻԿԻ ԳՈՐԾԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 57

ՀԱՎԵԼՎԱԾ 2. 1998 Թ-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ը ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԱԶԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 57

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) զորակոչիկների իրավունքների պաշտպանությունը և զորակոչի գործընթացի նկատմամբ վերահսկողությունը դիտարկելով որպես զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ապահովման և քաղաքացիական վերահսկողության կարևորագույն բաղադրիչներից մեկը, 2008 թվականից իրականացնում է զորակոչի գործընթացի մոնիթորինգ: Բացի մոնիթորինգից, Կազմակերպությունը իրականացնում է նաև նախազորակոչային տարիքի անձանց, զորակոչիկների, սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների, պահեստազորում հաշվառված քաղաքացիների իրավունքների և պարտականությունների շարունակական իրազեկում և իրավական խորհրդատվության ապահովում:

Կազմակերպության միջոցով քաղաքացիներն իրազեկվում են զորակոչի գործընթացի տարբեր փուլերում որոշակի իրավական ընթացակարգերի վերաբերյալ, մասնավորապես՝ պարտադիր ժամկետային ծառայության, վարժական հավաքների կամ զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիների շրջանում՝ ծանուցման, նրանց առողջական վիճակի հետազոտման, առողջական վիճակի վերաբերյալ բժշկական եզրակացությունների, պիտանիության վերաբերյալ որոշումների, բժշկական և այլ փաստաթղթերի տրամադրման հետ կապված պետական մարմինների գործողությունների, զորակոչիկների նկատմամբ վերաբերմունքի և այլ խնդիրների մասին:

Կազմակերպությունը իրականացնում է նաև օրենսդրական վերլուծություններ և պետական մարմիններին պարբերաբար ներկայացնում օրենսդրական փոփոխությունների և իրավակիրառ պրակտիկայի վերաբերյալ առաջարկություններ:

Կազմակերպության կողմից ներկայացվում է 2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ժամանակահատվածում (2021 թ օգոստոսի 1-ից մինչև

2023 թ հունվարի 31-ը) Կազմակերպությանը դիմած զորակոչիկների իրավունքների վիճակի մասին զեկույցը:

Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունում պարբերական վարժական հավաքներ սկսեցին անցկացվել 2021 թվականից սկսած, զեկույցում հակիրճ անդրադարձ է կատարված նաև դիտարկվող նույն ժամանակահատվածում (2021 թ օգոստոսի 1-ից մինչև 2023 թ հունվարի 31-ը) Կազմակերպություն դիմած պահեստազորում հաշվառված անձանց կողմից բարձրաձայնված խնդիրներին:

Զեկույցին կից հավելվածներում ներկայացված են նաև Կազմակերպություն դիմած որոշ զորակոչիկների գործերի նկարագրությունները, ինչպես նաև տեղեկություններ 1998 թ-ից մինչև 2023 թ. հունվարի 31-ը ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած և ազատված քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ:

Զեկույցում ամփոփված տեղեկությունները ստացվել են ՀՀ տարբեր մարզերից դիմած քաղաքացիներից, նրանց հարազատներից, ՀՀ պաշտպանության նախարարությունից և վերջինիս ենթակայության ներքո գործող կառույցներից:

Կազմակերպություն դիմած քաղաքացիները Լոռու (45 հոգի, որից 28-ը՝ զորակոչիկ, 17-ը՝ պահեստազորում հաշվառված անձ), Շիրակի (7 հոգի՝ 6 զորակոչիկ և 1 պահեստազորում հաշվառված անձ), Տավուշի (2 հոգի՝ 1 զորակոչիկ և 1 պահեստազորում հաշվառված անձ), Արագածոտնի (1 զորակոչիկ), Արարատի (2 հոգի՝ է զորակոչիկ և 1 պահեստազորում հաշվառված անձ), Արմավիրի (1 պահեստազորում հաշվառված անձ), Տավուշի (1 պահեստազորում հաշվառված անձ), Կոտայքի (2 հոգի՝ 1 զորակոչիկ և 1 պահեստազորում հաշվառված անձ), Սյունիքի (1 զորակոչիկ), Գեղարքունիքի (2 հոգի՝ 1 զորակոչիկ և 1 պահեստազորում հաշվառված անձ) մարզերից են, Երևան քաղաքից (21 հոգի՝ 12 զորակոչիկ և 9 պահեստազորում հաշվառված անձ), արտերկրից (16 հոգի՝ 15

զորակոչիկ և 1 պահեստազորում հաշվառված անձ), ևս 22 զորակոչիկ և 36 պահեստազորում հաշվառված անձ բնակության վայրը չի ցանկացել նշել:

Այսպես, նշված զորակոչերի ընթացքում Կազմակերպություն է դիմել ընդհանուր թվով 158 հոգի, որից 70 զորակոչիկ, 69 պահեստազորում հաշվառված անձ, 9 զինվորական հաշվառման ենթակա անձ, 9 սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած անձ և 1 զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված քաղաքացի:

ԶՈՐԱԿՈՉԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զորակոչի գործընթացը, զորակոչիկների բժշկական զննության անցկացումը, տարբեր հիմնավորումներով տարկետումից օգտվելու իրավունքը կարգավորող և հարակից հիմնական իրավական ակտերն են.

- ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը.***[1]
  - *2022 թ. ապրիլի 12-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց օրենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-104-Ն[2]) :*

Օրենքի 21-րդ հոդվածը լրացվեց 7-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունք ունեցող քաղաքացին կարող է իր դիմումի համաձայն հրաժարվել

[1] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=173242
[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=162548

պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքից և սույն օրենքով սահմանված կարգով զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության»:

Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ ՀՀ պաշտպանության մարտական գործողությունների ժամանակ զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր ունեցող, կամ ընտանիքի միակ արու զավակը հանդիսացող և ՀՀ զինված ուժերում կամ այլ զորքերում կամ ՀՀ միջազգային պայմանագրերով ՀՀ-ում տեղակայված օտարերկրյա պետությունների զինվորական ստորաբաժանումներում զինվորական ծառայության ընթացքում զոհված (մահացած) ծնող կամ եղբայր կամ քույր ունեցող քաղաքացին ազատվում է շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայությունից: 2022 թ. ապրիլի 12-ի փոփոխությամբ, փաստացի, վերոգրյալ **քաղաքացուն տրվում է հնարավորություն իր դիմումի համաձայն հրաժարվել պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու իրավունքից և զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության:**

- *2022 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց օրենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-363-Ն[3]):*

Օրենքի 21-րդ հոդվածը լրացվեց 5.1-ին և 5.2-րդ մասերով: Մասնավորապես՝ ***«Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը, որպես օտարերկրյա քաղաքացի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերել որևէ մարզաձևի՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում*** *(որևէ տարիքային խմբում)* ***հանդես գալու համար*** *և մինչև 2021 թվականի մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրել է:*

5.2. Սույն հոդվածի 5.1-ին մասով պարտադիր զինվորական ծառայությունից ազատվելու համար քաղաքացին կամ համապատասխան ֆեդերացիան մինչև 2022

[3] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169377

թվականի նոյեմբերի 1-ը դիմում է Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմին, որը մեկամսյա ժամկետում պարզում է ներկայացրած փաստաթղթերի համապատասխանությունը սույն հոդվածի 5.1-ին մասին և միջնորդություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, որը քաղաքացուն ազատում է պարտադիր զինվորական ծառայությունից՝ Հայաստանի Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառի պետական կառավարման լիազոր մարմնի միջնորդությունն ստանալուց հետո՝ մեկամսյա ժամկետում:»

Սույն օրենքը գործել է մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

- *2022 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց օրենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-364-Ն):*[4]

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասում՝ «27 տարին լրանալը,» բառերից հետո լրացվեց «իսկ սույն օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ մասերով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից՝ գիտության և կրթության բնագավառներում տարկետում ստացած քաղաքացիները՝ մինչև 28 տարին լրանալը,» բառերով, իսկ «համապատասխանաբար 27» բառերից հետո՝ «28» թվով:»

Փոփոխությունը վերաբերում է ՀՀ կառավարության որոշմամբ գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող, մասնավորապես՝ **բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին**

[4] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169380

պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետմանը՝ մինչև 28 տարին լրանալը, նախկինում գործող 27-ի փոխարեն:

- *2022 թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց օրենք «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-532-Ն[5]).*

Օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերի «**առաջին խմբի հաշմանդամություն ունեցող կամ երկրորդ խմբի հաշմանդամություն** (որը սահմանվել է ինքնասպասարկման ապահովման ունակության առնվազն երկրորդ աստիճանի կենսագործունեության սահմանափակման հիմքով) ունեցող» **բառերը փոխարինվեց «ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող (ֆունկցիոնալության գնահատման ինքնասպասարկման բաղադրիչի ծանր կամ խորը սահմանափակումների դեպքում)» բառերով:**

Օրենքում «**խեղումը**» **բառը հանվեց, իսկ «հաշմանդամ» բառը փոխարինվեց «հաշմանդամություն ունեցող անձ» բառերով**:

Փաստացի, Օրենքում կատարվեցին իրավական ձևակերպումներին վերաբերող որոշակի փոփոխություններ:

- ***2017 թվականի նոյեմբերի 15-ին ընդունված «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը.***[6]
- *2022 թ. դեկտեմբերի 8-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց օրենք «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-334 -Ն[7]):*

---

[5] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172219
[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=144772&fbclid=IwAR2YNtgZoGAzTsYzhgXysWK7v6hNuhTGc1WB_NBHvKtEI1EvVMVgrHDmnVY
[7] https://www.arlis.am/documentview.aspx?docid=166820

Օրենքում զորակոչի, մասնավորապես զորահավաքային զորակոչին վերաբերող 29-րդ հոդվածի 2-րդ մասում՝ 4-րդ կետի «պատգամավոր է» բառերը փոխարինվեց «պատգամավոր կամ Հայաստանի Հանրապետության կառավարության անդամ կամ դատավոր կամ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ է, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանը.» բառերով:

Այսինքն՝ **զորահավաքային զորակոչի ոչ ենթակա քաղաքացիների ցանկում ավելացվեցին նաև ՀՀ կառավարության անդամները, դատավորները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանը:**

- ***2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ կառավարության «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» 404 որոշումը[8].***
  - *2022 թ. դեկտեմբերի 12-ին ՀՀ կառավարության կողմից ընդունվեց որոշում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին (N 2053-Ն[9]):*

Որոշմամբ ներդրվեցին նոր ու ժամանակակից չափելիության սանդղակներ, որոշ հետազոտություններ դարձան պարտադիր, ինչի մասին Կազմակերպությունը բազմիցս առաջարկներ է ներկայացրել ՀՀ Պաշտպանության նախարարությանը: Ներկայումս որոշմամբ սահմանված ախտորոշումները համապատասխանեցված են Հիվանդությունների միջազգային դասակարգման (ՀՄԴ) 10-րդ վերանայմանը[10] (2019): **Նշենք, որ դեռևս 2019 թվականից սկսած ՀՔԱ Վանաձորի գրասենյակը առաջարկում էր ՀՀ**

[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=132970
[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=172242
[10] https://icd.who.int/browse10/2019/en#/F20-F29

կառավարության 2018 թ. 404-Ն որոշմամբ սահմանվող հիվանդությունները համապատասխանեցնել Հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգմանը: Այդ նպատակով Կազմակերպությունը բազմիցս հանդիպումներ է ունեցել շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչների հետ՝ բարձրացնելով խնդրի կարևորությունը: Կազմակերպության տարիներ ձգվող ջանքերի, կատարած աշխատանքի, ջատագովության արդյունքում 2023 թ. ուժի մեջ մտած փոփոխություններով որոշմամբ սահմանված ախտորոշումները համապատասխանեցվեցին Հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգմանը:

Չնայած իրականացրած փոփոխությունները դրական են, այնուամենայնիվ առկա են մի քանի ընդհանուր բնույթի և կոնկրետ հոդվածներին առնչվող խնդիրներ, որոնց վերաբերյալ Կազմակերպությունը իրականացրել էր դիտարկումներ և մշակել էր առաջարկներ՝ ներկայացնելով դրանք ՀՀ պաշտպանության նախարարությանը: Այնուամենայնիվ, դրանց մեծ մասը չի ընդունվել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տարբեր հիմնավորումներով:

Այսպես, ներկայացնենք Կազմակերպության կողմից արձանագրած խնդիրները որոշմամբ սահմանված ձևակերպումների համատեքստում:

- Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում կիրառվում են այնպիսի արտահայտություններ՝ ինչպիսիք են՝ «ձգձգվող» կամ «բուժմանը դժվար ենթարկվող» հասկացությունները, որոնց միջոցով դժվար է գնահատել ժամանակահատվածը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկել էր **հստակեցնել «ձգձգվող» կամ «բուժմանը դժվար ենթարկվող» հասկացությունները և սահմանել կոնկրետ ժամկետներ** կամ ժամանակահատվածներ ըստ յուրաքանչյուր հիվանդության՝ ելնելով հիվանդության ախտորոշման համար անհրաժեշտ ժամանակից: Առաջարկությունը չի ընդունվել ՀՀ ՊՆ կողմից այն հիմնավորմամբ, որ բուժման գործընթացում յուրաքանչյուր

հիվանդության բուժման և ելքի համար գործնականում հնարավոր չէ որևէ ժամկետ սահմանել:

- «Կակազության դեպքում փորձաքննվողը ենթարկվում է հիմնավոր հետազոտության՝ ներառելով նյարդաբանի, հոգեբույժի և քիթկոկորդականջաբանի (նաև՝ լոգոպեդի) խորհրդատվությունը»: Կազմակերպության պրակտիկայից ելնելով՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից առաջարկվել էր, որ կակազության դեպքում բացի նյարդաբանի, հոգեբույժի և քիթկոկորդականջաբանի ներգրավումը, փորձաքննության ժամանակ անհրաժեշտ է **ներառել լոգոպեդի պարտադիր մասնակցությունը** և բացառել տվյալ մասնագետի ներգրավումը որպես հայեցողական մոտեցում:

Չնայած ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության կողմից Կազմակերպությանը գրավոր տեղեկացվել է, որ սույն առաջարկն ընդունվել և ներառվել է որոշման նախագծում, սակայն 2022 թ. դեկտեմբերի 22-ին ընդունված և 2023 թ. փետրվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխություններում այն չի արտացոլված:

- 78-րդ հոդվածով սահմանվում է, որ աչքի ծակող-թափանցող վնասվածքների կապակցությամբ վիրահատության ենթարկված զորակոչիկները լիարժեք բուժումից և վերականգնումից հետո ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, անկախ տեսողության սրությունից և կիրառվում է 85-րդ հոդվածի «գ» կետը: Տվյալ հոդվածը անհասկանալի է այն առումով, որ այն դեպքերում, երբ վնասվածքից հետո անձը ստացել է լիարժեք բուժում, սակայն, **տեսողության սրությունը տուժել է, ապա անհասկանալի է, թե այդ պարագայում ըստ որ հոդվածի է փորձաքննվում**, այն դեպքում, երբ 78-րդ հոդվածը բացառում է տեսողության սրությամբ փորձաքննումը, և փորձաքննությունը սահմանվում է ըստ 85-րդ հոդվածի: Կազմակերպությունը առաջարկել է հստակեցնել հոդվածը: Առաջարկությունը չի ընդունվել ՀՀ ՊՆ կողմից այն հիմնավորմամբ, որ անհրաժեշտ է 78-րդ և 85-րդ հոդվածների «գ» կետերի սահմանափակումների կիրառումը՝ հավելելով, որ նույնիսկ հնարավոր բարձր

տեսողության սրությունը մթնշաղային և գիշերային ժամերին զգալի տուժում է, որը, ըստ ՀՀ ՊՆ-ի, հիմնավոր է դարձնում 85-րդ հոդվածի «գ» կետի կիրառումը:

- Որոշմամբ սահմանված է, որ «Գործառութային բնույթի, առանց կլինիկական դրսևորումների, անցողիկ, եզակի նախասիրտ-փորոքային հաղորդչականության I-II աստիճանի մասնակի պաշարումները և սինո-աթրիալ II աստիճանի մասնակի պաշարումները փորձաքննվում են «դ» կետով»: Վերոգրյալի հիման վրա Կազմակերպությունն առաջարկել է **վերանայել այս հոդվածը, քանի որ II աստիճանի պաշարումը չի կարող լինել մասնակի և անցողիկ**: Անցողիկ, եզակի առաջին աստիճանի պաշարումը կարող է լինել ֆիզիոլոգիական՝ դեռահաս, երիտասարդ տարիքում: Առաջարկությունը չի ընդունվել ՀՀ ՊՆ կողմից այն հիմնավորմամբ, որ «II աստիճանի պաշարումը իհարկե չի կարող լինել մասնակի, բայց կարող է լինել անցողիկ: Առաջին աստիճանի պաշարումը կարող է լինել ֆիզիոլոգիական՝ դեռահաս, երիտասարդ տարիքում», որն ընդգրկված է որոշման մեջ և ձևակերպված է որպես «Գործառութային բնույթի, առանց կլինիկական դրսևորումների անցողիկ, եզակի առաջին աստիճանի պաշարումներ», որը, ըստ ՀՀ ՊՆ-ի ավելի մանրամասն է ներկայացնում և թույլ է տալիս տարբերակել վերը նշված պաշարումների ֆիզիոլոգիական կամ պաթոլոգիկ լինելը:

Ներկայացնենք ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ 2022 թ. դեկտեմբերի 22-ին փաստացի կատարված և 2023 թ. փետրվարի 1-ից ուժի մեջ մտած փոփոխությունները.

Կատարվել է փոփոխություն «Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների անվանման» մեջ: Այժմ հիվանդությունների ախտաբանական վիճակների անվանումները դասակարգվում են ըստ ՀՄԴ (հիվանդությունների միջազգային դասակարգման) **ծածկագրերի, գործառույթների խանգարումների աստիճանների: Ինչպես արդեն նշվեց, սույն փոփոխությունը կարող ենք համարել Կազմակերպության տարիներ ձգվող ջանքերի, կատարած աշխատանքի, ջատագովության արդյունքը:**

- Բացի այդ՝ կատարվել են փոփոխություններ «Հիվանդությունների և ֆիզիկական թերությունների ցանկի» սյունակների դասակարգման մեջ:

Այսպես, եթե որոշման Հավելված 1-ի ցանկի I սյունակը նախկինում վերաբերում էր «Զորակոչային տեղամասերին կցագրվող քաղաքացիներին, զորակոչիկներին, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմին», ապա 2023 թ. ուժի մեջ մտած փոփոխությամբ **I սյունակով փորձաքննվում են** «Զինվորական **հաշվառման** ենթակա քաղաքացիները, սահմանված ժամկետում **հաշվառման չկանգնած զորակոչային տարիքի** քաղաքացիները, պարտադիր զինվորական ծառայության շարքային կազմի **զորակոչի ենթակա քաղաքացիները**, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն պարտադիր զինվորական **ծառայությունից ազատված** և **պահեստազորում հաշվառված** քաղաքացիները, զինվորական ծառայության ընթացքում **առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված** և օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն շարքային կազմի պարտադիր զինվորական **ծառայությունից արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացիները, ՌՈՒՀ-երում (ԲՈՒՀ-երում) ուսանելու համար ոչ պիտանի ճանաչված** կուրսանտները (սպայական կոչում չունեցող ունկնդիրներ, ուսանողներ)»:

ՌՈՒՀ ընդունվողները, ՌՈՒՀ-երի, ինչպես նաև ՀՀ ՊՆ հետ կնքված քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրով ԲՈՒՀ-երի՝ առաջին և երկրորդ կուրսերի կուրսանտները (սովորողներ) նախկինում փորձաքննվում էին II սյունակով:

Կատարված փոփոխությամբ **II սյունակով փորձաքննվում** են միայն **պարտադիր զինվորական ծառայության** շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի **զինծառայողները**, որոնք նախկինում ներառված էին I սյունակում՝ զորակոչային տեղամասերին կցագրվող քաղաքացիների, զորակոչիկների հետ միասին:

III սյունակը նախկիում վերաբերում էր բոլոր կազմերի պայմանագրային, ժամկետային պարտադիր զինվորական ծառայության սպայական կազմի

զինծառայողներին, ՌՈՒՀ-երի, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության հետ կնքված քաղաքացիա-իրավական բնույթի պայմանագրով ԲՈՒՀ-երի՝ սկսած երրորդ կուրսից՝ կուրսանտներին (սովորողներ)։ Մինչդեռ կատարված փոփոխությամբ **III սյունակով փորձաքննվում են ՌՈՒՀ-երում ուսանելու** համար **դիմած քաղաքացիները**, **բարձրագույն ուսումնական հաստատություններում** բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ **սովորելու համար դիմած քաղաքացիները**, **Պաշտպանության նախարարության հետ** ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո **Պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում** և պայմաններով զինվորական **ծառայություն անցնելու** քաղաքացիաիրավական բնույթի **պայմանագիր կնքելու համար դիմած քաղաքացիները**։

IV սյունակով նախկինում փորձաքննվում էին **ՌՆ, ԻՃ այլ աղբյուրների, ՀՎԲՄ, ԷՄԴ ստեղծող սարքերի հետ աշխատող զինծառայողներին** և այդպիսի աշխատանքի ընդունվողները։ Մինչդեռ կատարված փոփոխությամբ նշված խմբերը փորձաքննվում են **VI սյունակով**։ Իսկ **IV սյունակով**, ըստ նոր փոփոխությունների փորձաքննվում են **պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչի** ենթակա քաղաքացիները, «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերի համաձայն պարտադիր զինվորական ծառայությունից ազատված և պահեստազորում հաշվառված, ինչպես նաև զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված և օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն պահեստազորի սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայությունից արձակված և պահեստազորում հաշվառված քաղաքացիներին։

V սյունակով, ըստ կատարված փոփոխությունների, փորձաքննվում են բոլոր կազմերի **պայմանագրային զինվորական ծառայություն անցնելու համար դիմած քաղաքացիները**, բոլոր կազմերի պայմանագրային զինծառայողները, **պահեստազորի**

սպայական կազմի պարտադիր զինվորական ծառայության **զինծառայողները**, **ՌՈՒՀ**-երի **կուրսանտները** (սպայական կոչում չունեցող ունկնդիրներ, ուսանողներ), բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ սովորողները, **Պաշտպանության նախարարության հետ** ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո Պաշտպանության նախարարության կողմից նշված վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու **քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած** քաղաքացիները, **վարժական հավաքների ներգրավվող** քաղաքացիները, **զորահավաքային զորակոչի ենթակա քաղաքացիները**:

- Բացի նշված փոփոխություններից, 2023 թ ուժի մեջ մտած փոփոխությամբ եզրակացությունների վերաբերյալ ձևակերպումները ևս փոխվեցին. այժմ պիտանիության մասին ձևակերպումները լատինատառ են «A, B, C, D, E, F, G, H, I, J»: Մասնավորապես՝ սահմանվում է, հետևյալը.

A. պիտանի է զինվորական ծառայության համար,

B. սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար,

C. կարիք ունի բուժման,

D. կարիք ունի ծառայողական պարտականություններից մասնակի ազատման՝ մինչև 15 օր ժամկետով կամ արձակուրդ հիվանդության պատճառով (վերականգնողական),

E. ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,

F. ոչ պիտանի է զինվորական ծառայության համար,

G. պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

H. ոչ պիտանի է ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար,

I. ենթակա է կանչվելու վարժական հավաքի,

J. ենթակա չէ կանչվելու վարժական հավաք:

Անդրադառնանք ՀՀ կառավարության 2018 թ. N 404-ն որոշման հավելվածում կոնկրետ հիվնդությունների փորձաքննության և պիտանիության որոշման կարգի մեջ կատարված բովանդակային որոշ փոփոխություններին:

- Այսպես, որոշման **5-րդ հոդվածը** («Սուր և անցողիկ փսիխոտիկ խանգարումներ) հստակեցվեց, մասնավորապես, եթե նախկինում «ձգձգվող ընթացքով, երկարատև բուժում պահանջող» և «ռեմիսիայի բացակայությամբ ընթացող» դեպքերը փորձաքննվում էին առանձին «ա» և «բ» կետերով և առաջին դեպքում զորակոչիկները ճանաչվում էին ոչ պիտանի, իսկ երկրորդ դեպքում ժամանակավորապես ոչ պիտանի զինծառայության համար, ապա այժմ դրանք միավորվել են հոդվածի «ա» կետում՝ «ձգձգվող ընթացքով, երկարատև բուժման ֆոնի վրա» ձևակերպմամբ և այդ կետով փորձաքննվող զորակոչիկները ճանաչվում են ոչ պիտանի զինծառայության համար:

Նույն հոդվածի «գ» կետը՝ «կարճատև և բարենպաստ ընթացքով դեպքեր», որի դեպքում զորակոչիկներին նախկինուն տրամադրվում էր տարկետում բուժման նպատակով, ևս հստակեցվել է «բ» («կարճատև և բարենպաստ ընթացքով դեպքեր բուժումից հետո, որոնք ավարտվում են լավացումով կամ թեթև ասթենիզացմամբ») և «գ» («կարճատև և բարենպաստ ընթացքով դեպքեր (բուժում կամ դիտարկումպահանջող») առանձին կետերի շնորհիվ, և արդյունքում «բ» կետով փորձաքննվելիս զորակոչիկներին տրամադրվում է տարկետում բուժման նպատակով, «գ» կետով փորձաքննվելիս՝ զորակոչիկները ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

- Որոշման **6-րդ հոդվածում** («Ախտանշանային և այլ հոգեկան խանգարումներ») կատարվեց հստակեցում, մասնավորապես՝ նախկինում գործոգ որոշման «բ» կետը՝ «թեթև արտահայտված կարճատև փսիխոտիկ և ոչ փսիխոտիկ խանգարումներ, որոնք ավարտվում են լավացումով կամ թեթև ասթենիզացմամբ», որով փորձաքննվելիս

զորակոչիկներին նախկինում տրամադրվում էր տարկետում բուժման նպատակով, հստակեցվեց նոր՝ «բ» («թեթև արտահայտված կարճատև փսիխոտիկ և ոչ փսիխոտիկ խանգարումներ (բուժում կամ դիտարկում պահանջող)») և «գ» («թեթև արտահայտված կարճատև փսիխոտիկ և ոչ փսիխոտիկ խանգարումներ, որոնք ավարտվում են լավացումով կամ թեթև ասթենիզացմամբ») կետերով՝ առաջին դեպքում սահմանելով տարկետում՝ բուժման նպատակով, երկրորդ դեպքում սահմանվում է սահմանափակումով պիտանիություն:

- Որոշման **9-րդ հոդվածի** («Հոգեկան և վարքային խանգարումներ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով») «բ» կետով «սուր պսիխոտիկ խանգարումներ՝անձի չափավոր կամ թեթև արտահայտված փոփոխություններով, կախվածության համախտանիշ, դադարեցման վիճակներ և այլ բարդություններ, վնասակար հետևանքներ (սոմատիկ և հոգեկան)՝ հոգեակտիվ նյութերի գործածման հետևանքով» զորակոչիկին նախկինում տրամադրվում էր տարկետում՝ բուժման նպատակով, այժմ զորակոչիկը ճանաչվում է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար:
- Որոշման **23-րդ հոդվածի** («Տուբերկուլոզ») «բ» կետով «ակտիվ՝ առանց միկրոբակտերիայի արտազատման և քայքայման» փորձաքննվելիս զորակոչիկը նախկինում ճանաչվում էր ոչ պիտանի զինվորական ծառայության համար, մինչդեռ այժմ, երբ կետը լրացվել է «ինչպես նաև վիրահատության հետևանքները և սպիական փոփոխությունները՝ օրգան համակարգերի գործառույթի չափավոր խանգարումով» ձևակերպմամբ՝ զորակոչիկը ճանաչվում է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար:
- Որոշման **48-րդ հոդվածի** («Առրտայի, մագիստրալ, պերիֆերիկ անոթների, ավշային անոթների հիվանդություններ, բնածին արատներ, վնասումների հետևանքներ և հետվիրահատական վիճակներ») «ա» կետով՝ «արյան կամ ավշային շրջանառության և/կամ օրգանների կամ վերջույթների գործառույթների զգալի արտահայտված խանգարու-

մով» փորձաքննվելիս զորակոչիկը նախկինում ճանաչվում էր ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար, այժմ ճանաչվում է ոչ պիտանի:

Նույն հոդվածի «բ» կետով «արյան կամ ավշային շրջանառության և օրգանների կամ վերջույթների գործառույթների չափավոր արտահայտված խանգարումով» փորձաքննվելիս զորակոչիկին տրամադրվում էր տարկետում՝ բուժման նպատակով, այժմ զորակոչիկը ճանաչվում է ժամանակավորապես ոչ պիտանի զինծառայության համար:

Նույն հոդվածի «գ» կետով՝ «արյան կամ ավշային շրջանառության և օրգանների կամ վերջույթների գործառույթների աննշան արտահայտված խանգարումով» փորձաքննվելիս զորակոչիկը նախկինում ճանաչվում էր պիտանի զինծառայության համար, այժմ՝ սահմանափակումով պիտանի զինծառայության համար:

- Որոշման **57-րդ հոդվածի** («Ամորձու թաղանթների և սերմնալարի ջրգողություն» «ա» կետով՝ «խիստ արտահայտված, քայլքը դժվարացնող» զորակոչիկին նախկինում տրվում էր տարկետում բուժման նպատակով, այժմ զորակոչիկը ճանաչվում է ժամանակավորապես ոչ պիտանի զինծառայության համար:
- Որոշման **58-րդ հոդվածի** («Ամորձիների բացակայություն») «բ» կետով «մեկ ամորձու բացակայություն՝ տեղակայումը որովայնի խոռոչում, աճուկային խողովակում կամ դրա արտաքին անցքում, առանց խանգարումների» փորձաքննվող զորակոչիկը նախկինում ճանաչվում էր պիտանի զինվորական ծառայության համար, այժմ «երկու ամորձու տեղակայում որովայնի խոռոչում կամ բացակայությունը, միակ ամորձի» ախտորոշմամբ զորակոչիկը ճանաչվում է ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները, կարող ենք արձանագրել, որ ՀՀ կառավարության 2018 թ. N **404-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները դրա կան են այն իմաստով, որ**

- ✓ հիվանդությունների դասակարգումները համապատասխանեցված են ներկայումս գործող Հիվանդությունների միջազգային դասակարգման տասներորդ վերանայման դասակարգումներին,
- ✓ որոշ դեպքերում պիտանիության աստիճանը որոշող դրույթներում հաշվի է առնվում զորակոչիկի կամ զինծառայողի առողջական վիճակը,
- ✓ ըստ կարգավիճակի՝ անձանց փորձաքննության սյունակներն այժմ առավել հստակ են դասակարգված ըստ առանձին խմբերի:

ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները բացասական են այն իմաստով, որ

- ✓ սահմանված չեն հստակ ժամկետներ՝ ժամանակ ենթադրող որոշ հասկացությունների համար՝ «ձգձգվող», «բուժմանը դժվար ենթարկվող»,
- ✓ որոշ դեպքերում պիտանիության աստիճանը որոշող դրույթներում կատարված փոփոխություններով հաշվի չեն առնվում առողջական խնդիրների ծանրության աստիճանը,
- ✓ հստակեցված չեն որոշ հոդվածների սահմանումներն ու որոշ առողջական խնդիրների դեպքում փորձաքննության հոդվածները:

- *2018 թվականի ապրիլի 12-ի ՀՀ կառավարության «Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու*

և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 405 որոշումը[11]:

- *2022 թ. դեկտեմբերի 22-ին ՀՀ կառավարությունն ընդունեց որոշում ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին:*

2022 թ. մարտի 18-ին ՀՀ արդարադատության նախարարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում հանրային քննարկման դրվեց ՀՀ պաշտպանության նախարարության կողմից մշակված ՀՀ կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացում կատարելու մասին ՀՀ կառավարության նախագիծը[12]:

Համաձայն նախագծի՝ նախատեսվում էր **Կենտրոնական բժշկական հանձնաժողովի** կազմում ընդգրկել նաև ՀՀ պաշտպանության նախարարության և զինվորական կոմիսարիատի ներկայացուցիչների, որոնք գործող որոշման հավելվածի համաձայն ընդգրկված չեն ԿԲՀ-ի կազմում: Մասնավորապես՝ Նախագծի հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ «ԿԲՀ-ի կազմում ընդգրկվում են հանձնաժողովի նախագահը և տեղակալը՝ ՀՀ պաշտպանության և առողջապահության նախարարությունների ներկայացուցիչներ, ավագ բժիշկը՝ ՀՀ ԶԿ գլխավոր բժիշկը (ըստ անհրաժեշտության), (…): Նախագծի «Հիմնավորումներ» բաժնի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ Նախագծի հավելվածի 16-րդ կետում նման փոփոխություն կատարելու անհրաժեշտությունը որևէ ձևով չի հիմնավորվել, ավելին, Նախագիծը որևէ դրույթ չի պարունակում ԿԲՀ-ի կազմում ՀՀ պաշտպանության նախարարության և զինվորական կոմիսարիատի ներկայացուցիչներին ընգրկելու անհրաժեշտության, գործող կարգավորումների փոփոխման իրավական, փաստական և այլ հիմքերի մասին: Նախագծով առաջարկվող փոփոխությունը, ըստ կազմակերպության, չի կարող ապահովել ԿԲՀ-ի գործառնական օբյեկտիվությունը, հաշվի

[11] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=121636
[12] https://www.e-draft.am/projects/4112/about

առնելով այն հանգամանքը, որ վերջինիս գործունեությունն ուղղված է զինապարտության կատարման ապահովմանը (զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտություն և բժշկական փորձաքննություն)։ Հաշվի առնելով ԿԲՀ-ի դերն ու իրականացրած գործառույթների բնույթը՝ Կազմակերպությունը գտնում է, որ **նպատակահարմար չէ** վերջինիս կազմում **ընդգրկել պաշտպանության ոլորտի քաղաքականություն իրականացնող մարմինների ներկայացուցիչների,** և ըստ այդմ ՀՀ պաշտպանության նախարարությանը **առաջարկեց գործընթացի կազմակերպմանը ներգրավել միայն այդ համակարգից դուրս այլ մարմիններին ու դրանց ներկայացուցիչներին՝ խուսափելու համար շահերի բախումից**։ Առաջարկությունը ՀՀ ՊՆ կողմից չընդունվեց այն հիմնավորմամբ, որ ԿԲՀ կազմում ՀՀ ՊՆ զինվորական կոմիսարիատի ներկայացուցիչների ընդգրկումը պայմանավորված է հանձնաժողովի նիստերը պլանավորելու և ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության համապատասխան տարածքային ստորաբաժանումներում կազմակերպելու, փորձաքննության ներկայացվող քաղաքացիների վերաբերյալ անհրաժեշտության դեպքում տարածքային ստորաբաժանումներից լրացուցիչ տվյալներ և փաստաթղթեր ստանալու, ինչպես նաև պաշտպանության նախարարին կամ հանձնաժողովի նախագահին հասցեագրված դիմում բողոքները քննարկելու և համապատասխան ընթացք տալու աշխատանքները համակարգելու հանգամանքով։ Սույն մեկնաբանությունը, սակայն, ընդունելի չէ Կազմակերպության համար։

Նախագծի հավելվածի 16-րդ կետի համաձայն՝ «ԿԲՀ-ի անդամ չի կարող նշանակվել սույն որոշման 15-րդ և 81-րդ կետերով սահմանված հանձնաժողովների անդամ հանդիսացող անձը»։ Առաջարկվող փոփոխության ընդունվելու դեպքում որպես ԿԲՀ-ի անդամ կարող են նշանակվել նաև այլ բժշկական կամ ռազմաբժշկական հանձնաժողովի անդամները, բացառությամբ զինկոմիսարիատների բժշկական և Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովների անդամների, ինչը խնդրահարույց է և կրկին չի

ապահովելու զինապարտ քաղաքացիների առողջական վիճակի հետազոտության և բժշկական փորձաքննության օբյեկտիվությունը՝ հաշվի առնելով վերը նշված պնդումները:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից առաջարկվեց ԿԲՀ-ի կազմում ընդգրկվող անձանց ցանկը թողնել անփոփոխ, այն է՝ հանձնաժողովի նախագահը, տեղակալը (բժիշկ), անդամները՝ թերապևտ, սրտաբան, վիրաբույժ, վնասվածքաբան, նյարդաբան, հոգեբույժ, ակնաբույժ, մաշկաբան, օտոլարինգոլոգ (ՀՀ առողջապահության նախարարի ներկայացրած թեկնածուն), համակարգչային օպերատոր ու քարտուղար: Նաև թողնել անփոփոխ նախորդ որոշմամբ սահմանված դրույթն այն մասին, որ ԿԲՀ-ի անդամ չի կարող նշանակվել սույն կարգով սահմանված այլ բժշկական կամ ռազմաբժշկական հանձնաժողովի անդամ նշանակված անձը: **Առաջարկությունն ընդունվեց ՀՀ ՊՆ կողմից**:

Նախագծի հավելվածի 35-րդ կետի համաձայն՝ «Բժշկական կազմակերպությունը պարտավոր է քաղաքացուն կամ նրա օրինական ներկայացուցչին կամ նրա կողմից լիազորված անձին տրամադրել տեղեկություններ առողջական վիճակի, հետա-զոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին»: Առաջարկվող կարգավորումը բովանդակային որևէ փոփոխություն չէր նախատեսում գործող որոշմամբ սահմանված կարգավորումներում: Մինչդեռ, ինչպես նախկինում գործող, այնպես էլ առաջարկվող փոփոխությամբ հստակ չէ, թե բուժհաստատությունն ինչ եղանակով, ինչ կարգով, ինչ ծավալով և ինչ ժամկետներում է պարտավոր զինապարտ քաղաքացուն կամ վերջինիս ներկայացուցչին տրամադրել տեղեկություններ, որի հետևանքով պրակտիկայում բուժհաստատությունները հաճախ կամ չեն տրամադրում առողջական վիճակի վերաբերյալ տեղեկություններ կամ դրանք տրամադրելու դիմաց պահանջում են կատարել վճարումներ, ինչը իրավաչափ չէ և խախտում է անձի տեղեկատվություն ստանալու միջազգային-իրավական փաստաթղթերով և ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքը: ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից առաջարկվեց, որ անձի կողմից իր

առողջական վիճակի **վերաբերյալ պահանջվող տեղեկությունները բժշկական կազմակերպությունը պարտավոր է տրամադրել անվճար և գրավոր կարգով՝ առավելագույնը 5-օրյա ժամկետում** (հիմք ընդունելով զորակոչի ժամկետային սահմանափակումը)։ Սույն առաջարկն արդիական է նաև Նախագծի հավելվածի 42-րդ և 63-րդ կետերի, 117-րդ կետի 5-րդ ենթակետի համար՝ մասնավորապես զինվորական հաշվառման ենթակա քաղաքացիների, պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիների բժշկական և զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) ռազմաբժշկական փորձաքննության համար։ **Առաջարկությունն ընդունվեց ՀՀ ՊՆ կողմից։** Մասնավորապես՝ 2022 թ ընդունված փոփոխությամբ սահմանվեց, որ «…Սույն կետում նշված տվյալները քաղաքացուն կարող են հասանելի լինել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով»։

Նախագծով սահմանվում էր. «Այն զորակոչիկները, որոնք հայտարարված զորակոչի ընթացքում հետազոտությունների արդյունքում ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով սահմանափակումներ նախատեսող հինգ և ավելի հոդվածներով, ճանաչվում են բուժման կարիք ունեցող և նրանց տրվում է տարկետում մեկ անգամ մինչև մեկ տարի ժամկետով՝ բուժման և/կամ դիտարկման նպատակով։ Տարկետման ավարտից հետո առողջական նույն վիճակի պահպանման պարագայում, զորակոչիկները ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով՝ ծառայության հեշտացված օրվա կարգացուցակով»։ Միաժամանակ, համաձայն Նախագծի հավելվածի 115-րդ կետի՝ «Ծառայության ընթացքում ձեռք բերած հիվանդությունների արդյունքում, ԿՌԲՓԿ որոշմամբ հինգ և ավելի սահմանափակում նախատեսող հոդվածներ ունեցող ժամկետային պարտադիր ծառայության շարքային կազմի զինծառայողները ճանաչվում են պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով՝ ծառայության հեշտացված օրվա կարգացուցակով»։

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի դիտարկմամբ՝ վերը նշված երկու դրույթները ևս Նախագծի հավելվածով բովանդակային փոփոխության չեն ենթարկվել: Դեռևս 2020 թ. Կազմակերպությունը, անդրադառնալով այս իրավակարգավորմանը, արձանագրել էր, որ գործնականում ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ: Այսպես, խնդիրներ կարող են ծագել մի քանի առողջական խնդիրներ ունեցող զինապարտների տարկետման իրավունքի իրացման հարցում: Ըստ ՀՀ կառավարության 2018 թ. 405-Ն որոշման շեմ է սահմանվել 5 և ավելի հիվանդության առկայությունը՝ շեշտը դնելով միայն հիվանդությունների քանակի վրա, այլ ոչ թե զուգահեռաբար մի քանի հիվանդության պարագայում ծանրաբեռնվածության և առողջական վիճակի հնարավոր վատթարացման վրա: Կազմակերպությունը մշտապես պնդել է, որ փորձաքննության կարգում պետք է կատարել համապատասխան փոփոխություններ, որի համաձայն միաժամանակ մի քանի հիվանդության դեպքում կսահմանվի անձին զինվորական ծառայության պիտանիությունը որոշելու և զորակոչելու գնահատման մոտեցումը և իրավական հիմքերը՝ դիտարկելով անձի առողջական վիճակի ողջ պատկերը և ոչ թե ըստ առանձին հիվանդությունների՝ մեկը մյուսից մեկուսի դիտարկելով, քանի որ այդ հիվանդությունները նույն անձի մոտ են: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գտնում է, որ այն անձին, ով ունի երկու և ավելի հիվանդություններ, որոնց հիմքով ճանաչվում է պիտանի զինվորական ծառայությանը սահմանափակումով, պետք է տրամադրվի տարկետում մինչև այդ հիվանդություններից անձի վերականգնումը կամ բուժումը: Առաջարկը դեռևս արդիական է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացիների և զինծառայողների ռազմաբժշկական փորձաքննության դեպքում: Առաջարկությունը ՀՀ ՊՆ կողմից չընդունվեցայն հիմնավորմամբ, որ «գործնականում բազմաթիվ են ֆիզիկական թերությունների և հիվանդությունների այն դեպքերը, որոնք խոչընդոտ չեն հանդիսանում քաղաքացու՝ զինվորական ծառայություն անցնելու համար, սակայն դրանց առկայության դեպքում քաղաքացին ճանաչվում է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և երկու կամ երեք հիվանդությունների հիմքով զինվորական

ծառայության համար սահմանափակումով պիտանի ճանաչված քաղաքացուն տարկետում տրամադրելը էականորեն կծանրաբեռնի առողջական վիճակի հետազոտություն և բժշկական փորձաքննություն իրականացնող հանձնաժողովների աշխատանքները, **ինչպես նաև կարող է խոչընդոտ հանդիսանալ զինված ուժերի համալրման հարցում»:**

Նախագծի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ բժշկական հանձնաժողովների կողմից քաղաքացիների վերաբերյալ կայացված եզրակացությունների բողոքարկման դեպքում վարչական կամ դատական կարգով բողոք բերելու ժամկետները կրկին սահմանվում են դրանց կայացման օրվանից, իսկ որոշ դեպքերում սահմանվում է, որ եզրակացությունները քաղաքացուն տրամադրվում են իր կողմից նման պահանջ ներկայացնելու դեպքում:

Նման կարգավորումները խնդրահարույց են անձի՝ իր իրավունքներին և շահերին առչնվող որոշումները ժամանակին ստանալու և այդ որոշումները բողոքարկելու իրական հնարավորությունների տեսանկյունից: Մասնավորապես, ինչպես նախկինում գործող, այնպես էլ առաջարկված փոփոխությունների դեպքում կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ անձը կարող է զրկվել վարչական կամ դատական կարգով բողոք բերելու իր հիմնարար իրավունքից այն պատճառով, որ վերը թվարկված եզրակացությունների կայացման օրվանից երկամսյա ժամկետում չկարողանա բողոքարկել համապատասխան եզրակացությունը, քանի որ նրան չի տրամադրվել վարչական ակտի օրինակը և վերջինիս բովանդակությունը՝ այդպիսի ակտ ընդունելու իրավական և փաստական հիմքերը, քաղաքացուն հայտնի չեն:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով անձը պետք է անձամբ ծանուցվի իր վերաբերյալ ընդունված իրավական ակտի, որոշման մասին:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն առաջարկել էր Նախագծի հավելվածով սահմանել, որ քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունները դրանց ընդունման

օրվանից եռօրյա ժամկետում համապատասխան բժշկական հանձնաժողովի կողմից պարտադիր կերպով հանձնվում են ակտի հասցեատիրոջը, իսկ եզրակացությունները կարող են բողոքարկվել Օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում: Առաջարկությունը ՀՀ ՊՆ կողմից չընդունվեց այն հիմնավորմամբ, որ ԿԲՀ եզրակացության հիման վրա կայացված վարչական ակտը (ՀՀ ՊՆ հրամանը կամ տարածքային ստորաբաժանման ղեկավարի որոշումը) «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2018 թ հոկտեմբերի 4-ի N 1132-Ն որոշմամբ սահմանված կարգով եռօրյա ժամկետում տրամադրվում է քաղաքացուն և ԿԲՀ եզրակացությունը տրամադրելու պարտադիր նորմ սահմանելու անհրաժեշտություն չկա:

ՀՀ Կառավարության 2018 թ N 405-Ն որոշման մեջ կատարված այլ էական փոփոխություններից է նաև այն հանգամանքը, որ Հավելված 2-ի՝ նախազորակոչային և զորակոչային տարիքի քաղաքացիների բժշկական հետազոտությունների վերաբերյալ 1-ին գլխում լրացվել է կետ՝ «Պահեստազորում հաշվառված քաղաքացիների բժշկական հետազոտություններ»-ի վերաբերյալ՝ ներկայացնելով բուժզննությունների ցանկը: Ըստ այդմ, «2.1. Պահեստազորում հաշվառված քաղաքացիների բժշկական հետազոտությունները ներառում են՝ 1) միկրոպրեցիպիտացիայի ռեակցիան. 2) արյան խմբի և ռեզուս պատկանելության որոշումը (եթե բացակայում է գրառում զինվորական գրքույկում). 3) ֆլյուորոգրաֆիա կամ կրծքավանդակի օրգանների ռենտգեն հետազոտությունը. 4) մեզի և արյան ընդհանուր քննությունը. 5) էլեկտրասրտագրումը. 6) որովայնի օրգանների ՈՒՁ հետազոտությունը. 7) տուբերկուլինային մաշկային փորձը:»:

Այսպիսով, ամփոփելով ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի **N 405-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները, կարող ենք արձանագրել, որ դրանք դրական են այն իմաստով, որ**

- սահմանվեց պահեստազորում հաշվառված քաղաքացիների բժշկական հետազոտությունների ցանկը, մինչդեռ այլ խնդիր է այն հանգամանքը, որ պահեստազորում հաշվառված անձինք հիմնականում չեն ենթարկվում նշված զննություններին վարժական հավանքների ներգրավվելիս,
- ԿԲՀ-ի կազմում ընդգրկվող անձանց ցանկը անփոփոխ է թողնվել, այն է՝ հանձնաժողովի նախագահը, տեղակալը (բժիշկ), անդամները: Նաև անփոփոխ է թողնվել նախորդ որոշմամբ սահմանված դրույթն այն մասին, որ ԿԲՀ-ի անդամ չի կարող նշանակվել սույն կարգով սահմանված այլ բժշկական կամ ռազմաբժշկական հանձնաժողովի անդամ նշանակված անձը,
- անձի կողմից իր առողջական վիճակի վերաբերյալ պահանջվող տեղեկությունները բժշկական կազմակերպությունը տրամադրում է անվճար և գրավոր կարգով: Տվյալները քաղաքացուն կարող են հասանելի լինել նաև էլեկտրոնային առողջապահության ԱՐՄԵԴ համակարգի միջոցով:

ՀՀ կառավարության 2018 թ. N 405-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունները բացասական են այն իմաստով, որ

- ԿԲՀ կազմում ընդգրկվում են պաշտպանության ոլորտի քաղաքականություն իրականացնող մարմինների ներկայացուցիչներ, ինչը նպատակահարմար չէ, քանի որ գործընթացի կազմակերպման ընթացքում պետք է ներգրավել միայն այդ համակարգից դուրս այլ մարմիններին ու դրանց ներկայացուցիչներին՝ խուսափելու համար շահերի բախումից,
- անձի մոտ 5 և ավելի հիվանդության առկայության դեպքում շեշտը դրվում է միայն հիվանդությունների քանակի վրա, այլ ոչ թե զուգահեռաբար մի քանի հիվանդության պարագայում ծանրաբեռնվածության և առողջական վիճակի հնարավոր վատթարացման վրա,

- միաժամանակ մի քանի հիվանդության դեպքում չի սահմանվում անձին զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու և զորակոչելու գնահատման մոտեցումը և իրավական հիմքերը՝ անձի մոտ առկա հիվանդությունները դիտարկելով առանձին՝ մեկը մյուսից մեկուսի և ոչ թե դիտարկելով անձի առողջական վիճակի ողջ պատկերը:
- քաղաքացու առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունները համապատասխան բժշկական հանձնաժողովի կողմից պարտադիր կերպով չեն հանձնվում ակտի հասցեատիրոջը,
- եզրակացությունները կարող են բողոքարկվել Օրենքով սահմանված կարգով վարչական ակտի ուժի մեջ մտնելուց, այլ ոչ թե անձին տրամադրվելուց հետո երկամսյա ժամկետում:

2021 Թ. ՁՄԵՌԱՅԻՆ, 2022 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ 2022 ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչին և պահեստազորայիններին վերաբերող հարցերով ՀՔԱ Վանաձորի գրասենյակ է դիմել **158** անձ, որոնցից

70 (44 %) զորակոչիկ՝ համապատասխանաբար 14, 31 և 25 հոգի յուրաքանչյուր զորակոչի ընթացքում, **69 (44%)** պահեստազորում հաշվառված անձ՝ վերոնշյալ ժամանակահատվածն ընդգրկող ընթացքում, **9 (6%) զինվորական հաշվառման ենթակա անձ**, համապատասխանաբար՝ 4, 3 և 2 հոգի յուրաքանչյուր զորակոչի ընթացքում, **9 (6%) սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած** անձ՝ համապատասխանաբար 2, 3 և 4 հոգի յուրաքանչյուր զորակոչի ընթացքում, **1 (1%)**

զինվորական ծառայության ընթացքում առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչված քաղաքացի՝ 2022 թ ամառային զորակոչի ընթացքում:

Նշենք, որ նախորդ երեք՝ 2020 թ. ամառային, 2020 թ. ձմեռային և 2021 թ. ամառային զորակոչերի ընթացքում Կազմակերպություն դիմողների թիվը կազմել է **142** հոգի՝ համապատասխանաբար **55 (38 %)**, **17 (12%) և 20 (14%)** զորակոչիկ յուրաքանչյուր զորակոչի ընթացքում, **5 (4%), 5 (4 %) և 3 (2 %) զինվորական հաշվառման ենթակա անձ** յուրաքանչյուր զորակոչի ընթացքում, **5 (4%)** սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայություն չանցած անձ՝ 2021 թ. ամառային զորակոչի ընթացքում: 2020 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում Կազմակերպություն է դիմել **պահեստազորում հաշվառված 19 (13 %) անձ**, 2021 թվականի ամառային զորակոչի ժամանակ՝ **13 (9 %):** Նախորդ տարիների ընթացքում կանոնավոր վարժական հավաքներ չեն իրականացվել, ուստի նախկին զորակոչերին վերաբերյալ տեղեկանքներում Կազմակերպությունը չի դիմած պահեստազորայինների թիվը:

Նկատենք, որ սույն զեկույցում դիտարկվող 3 զորակոչերի ընթացքում դիմած զորակոչիկների համեմատաբար փոքր թիվը պայմանավորված է հետպատերազմյան իրավիճակով: Այսպես, եթե դիտարկենք 2020 թ.պատերազմին նախորդող երեք՝ 2019 թ. ամառային, 2019 թ. ձմեռային և 2020 թ. ամառային և դրան հաջորդող երեք՝ 2020 թ. ձմեռային, 2021 թ. ամառային և 2021 թ. ձմեռային զորակոչերին Կազմակերպություն դիմած զորակոչիկների թիվը, կարելի է արձանագրել, որ հետպատերազմյան շրջանում դիմելիությունը նվազել է 60 %-ով, քանի որ մինչ պատերազմյան երեք զորակոչերին Կազմակերպություն են դիմել 183 զորակոչիկ, իսկ հետպատերազմյան շրջանում՝ 74 զորակոչիկ:

Ըստ էության 2022 թ. ձմեռային զորակոչից սկսած ՀՀ քաղաքացիները սկսեցին պարտադիր զինվորական ծառայության զորակոչվել միայն ՀՀ տարածքում: Այս առումով զինծառայողների և նրանց ընտանիքների շրջանում նկատվում էր այլ մոտեցում

զինվորական ծառայության իրականացման նկատմամբ, մասնավորապես՝ վերջիններս նախընտրում էին 2020 թ. պատերազմական գործողությունների ավարտից հետո հնարավորինս շուտ և կարևորը՝ ՀՀ տարածքում անցնել պարտադիր զինվորական ծառայություն: Այս պայմաններում շատերն անտեսում էին իրենց առողջական խնդիրները, ընտանեկան պայմանները և այլ հանգամանքները, որոնց առկայությամբ իրավունք ունեին բողոքարկելու պիտանիության վերաբերյալ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կայացրած որոշումները:

2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային, 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչի հետ կապված հարցերով դիմած անձինք ըստ աշխարհագրական տարածքի

Աղյուսակ 1. 2021 ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչի վերաբերյալ հարցերով դիմած անձինք ըստ աշխարհագրական տարածքի

Մարզ/ տարածք	2021 ձմեռ					2022 ամառ					2022 ձմեռ					**Ընդամենը**
	Զորակոչիկ	Զին հաշվ ենթ անձ	Սահմ. կարգի խախտ. զինծ. չանցած անձ	Առ. վիճ.. պատճ. զինծ. ոչ պիտանի ճանաչված քաղաքացի	Պահեստազորում հաշվառված անձ	Զորակոչիկ	Զին հաշվ ենթ անձ	Սահմ. կարգի խախտ. զինծ. չանցած անձ	Առ. վիճ.. պատճ. զինծ. ոչ պիտանի ճանաչված քաղաքացի	Պահեստազորում հաշվառված անձ	Զորակոչիկ	Զին հաշվ ենթ անձ	Սահմ. կարգի խախտ. զինծ. չանցած անձ	Զինծ. ոչ պիտանի ճանաչված քաղաքացի	Պահեստազորում հաշվառված անձ	
Լոռու մարզ	6				2	11		1		4	7	1	2		11	**45**
Չի նշել	3	3			17	10	2		1	18		1	2		1	**58**
Արտերկիր			2		1	5	1	2			2		3			**16**

Երևան	3					2				2	6	1			7	**21**
Շիրակի մարզ	1	1				2				1		2				**7**
Գեղարքունիքի մարզ						1				1						**2**
Արարատի մարզ	1									1						**2**
Կոտայքի մարզ					1						1					**2**
Տավուշի մարզ											1				1	**2**
Սյունիքի մարզ											1					**1**
Արագածոտնի մարզ											1					**1**
Արմավիրի մարզ										1						**1**
Ընդամենը	**14**	**4**	**2**	**0**	**21**	**31**	**3**	**3**	**1**	**28**	**19**	**5**	**7**	**0**	**20**	**158**

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից՝ Կազմակերպություն դիմած անձանց մեծ մասը՝ 28 %-ը Լոռու մարզից են (45 հոգի), 13 %-ը Երևան քաղաքից (21 հոգի), 10 %-ը՝ արտերկրից (16 հոգի), 4 %-ը՝ Շիրակի մարզից (7 հոգի), 1-ական %-ը Տավուշի, Արարատի, Կոտայքի, Գեղարքունիքի մարզերից (2-ական հոգի յուրաքանչյուր մարզից), 1-ական հոգի

Արմավիրի, Սյունիքի, Արագածոտնի մարզերից, ևս 37 %-ը (58 հոգի) բնակության վայրը չի ցանկացել նշել:

2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 ձմեռային զորակոչերի ընթացքում Կազմակերպություն դիմած **զորակոչիկների** մեծ մասի՝ 51 հոգու (32%), **զինվորական հաշվառման ենթակա** 2-ի (2%) **և պահեստազորում հաշվառված անձանցից** 5-ի (3 %) խնդիրը վերաբերել է առողջական վիճակի ոչ պատշաճ բժշկական զննության և փորձաքննության իրականացմանը, բժշկական եզրակացության հետ անհամաձայնությանը կամ ՀՀ կառավարության 2018 թ 404-Ն որոշմամբ սահմանված զինվորական ծառայության համար քաղաքացու պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի համապատասխան առկա առողջական խնդիրներով զինծառայությանը պիտանիության վերաբերյալ հարցի պարզաբանմանը:

58 պահեստազորային (37 %) դիմել է վարժական հավաքներին ներգրավելու իրավական հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն ստանալու համար:

11 զորակոչիկ (7 %) և **3 զինվորական հաշվառման ենթակա անձ** (2 %) դիմել է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված տարկետման և ազատման հիմքերի վերաբերյալ հարցերով /ընտանեկան դրության բերումով, ուսումը շարունակելու համար/:

4 զորչակոչիկ (3 %) և **3 զինվորական հաշվառման ենթակա անձ** (2 %) դիմել է երկքաղաքացիության դեպքում Հայաստանի Հանրապետությունում զինծառայություն անցնելու ընթացակարգերի, ինչպես նաև ՀՀ քաղաքացի լինելու և միաժամանակ այլ երկրում զինծառայություն անցնելու դեպքում Հայաստանի Հանրապետությունում զինծառայությունից ազատվելու կարգավորումների վերաբերյալ հարցերով:

9 հոգի (6 %) դիմել է սահմանված կարգի խախտմամբ զինվորական ծառայությունից խուսափելու հետ կապված հարցով:

Մյուս 12 անձանց խնդիրները կապված են եղել տարբեր այլ հարցերի և իրավական ընթացակարգերի պարզաբանման հետ *(տե՛ս Աղյուսակ 2)*:

Աղյուսակ 2. Կազմակերպություն դիմած զորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա անձանց և պահեստազորում հաշվառված անձանց խնդիրներն ըստ յուրաքանչյուր զորակոչի

Խնդիր	2021 թ. ձմեռային զորակոչ					2022 թ. ամառային զորակոչ					2022 թ.ձմեռային զորակոչ					Ընդամենը				
	Զորակոչիկ	Զին հաշվ. ենթ. անձ	Սահմ կարգի խախտում զինծ. չանցած	Զինծ. ոչ պիտանի ճանաչված քաղաքացի	Պահեստազորում հաշվ. անձ	Զորակոչիկ	Զին հաշվ. ենթ. անձ	Սահմ կարգի խախտում զինծ. չանցած	Զինծ. ոչ պիտանի ճանաչված քաղաքացի	Պահեստազորում հաշվ. անձ	Զորակոչիկ	Զին հաշվ. ենթ. անձ	Սահմ կարգի խախտում զինծ. չանցած	Զինծ. ոչ պիտանի ճանաչված քաղաքացի	Պահեստազորում հաշվ. անձ	Զորակոչիկ	Զին հաշվ. ենթ. անձ	Սահմ կարգի խախտում զինծ. չանցած	Զինծ. ոչ պիտանի ճանաչված քաղաքացի	Պահեստազորում հաշվ. անձ
Առողջական խնդիրներ/ոչ պատշաճ բժշկական օգնություն ստանալու, առողջական վիճակի զննության արդյունքների հետ անհամաձայնություն	10	2			2	20				3	21				1	**51**	**2**			**5**
Պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն /ուսման հիմքով, ընտանեկան պայմաններից ելնելով/	1	1				7					3	2				**11**	**3**			
«Քաղաքացիության մասին» և «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքների դրույթների վերաբերյալ խորհրդատվություն		1				4	2									**4**	**3**			
«Սահմանված կարգի խախտմամբ զինծառայություն չանցած			2					3					4					**9**		

քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի դրույթների վերաբերյալ խորհրդատվություն																				
Առողջական վիճակի զննության նպատակով համապատասխան ուղեգրերի տրամադրման վերաբերյալ խորհրդատվություն/ ուղեգիր չտրամադրելու մասին ահազանգ	3															**3**				
Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու կարգի վերաբերյալ խորհրդատվություն						2										**2**				
Ըստ բնակության վայրի ԶԶՀԾ համապատասխան ստորաբաժանումում հաշվառվելու վերաբերյալ խորհրդատվություն						1										**1**				
Ընտանեկան դրության բերումով անձանց բնակության վայրին մոտ ծառայություն իրականացվելու իրավական հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն							1										**1**			
ՌՈՒՀ ընդունելության կարգի և պայմանների վերաբերյալ խորհրդատվություն						1										**1**				
Հոգենյարդաբանական խնդիրների հիմքով (404 որոշման 7 Բ հոդված) զինծառայությանը ոչ պիտանի ճանաչված անձանց վարորդական իրավունքի տրամադրման վերաբերյալ									1										**1**	

խորհրդատվություն																				
Կորոնավիրուսային համավարակով պայմանավորված արտակարգ դրության ժամանակ արտերկրից ՀՀ վերադառնալու հնարավորության բացակայության պատճառով զորակոչից խուսափելու հիմքով հարուցված քրեական գործի շրջանակներում իրավական աջակցություն	1															**1**				
Բուժզննության նպատակով այլ բնակավայր մեկնելու համար նախատեսված տրանսպորտային ծախսի փոխհատուցումների վերաբերյալ խորհրդատվություն/ ահազանգ	1															**1**				
ԼԳԲՏ անձանց զինապարտության վերաբերյալ և ծառայության անցնելու ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն											1					**1**				
Զինծառայության համար ժամանակավերապես ոչ պիտանի ճանաչված անձանց փորձաքննության ժամանակահատվածի, փորձաքննության չներկայանալու դեպքում իրավական հետևանքների վերաբերյալ խորհրդատվություն											1									
Ահազանգ վարժական զորահավաքներին մասնակցելու					1															**1**

բանավոր ծանուցման մասին																				
Պատերազմից հետո զորամասերի լուծարման հետևանքով զինծառայողներին փաստաթղթերի տրամադրում					1															**1**
Զինգրքույկում մարտական գործողությունների մասին նշման բացակայության վերաբերյալ ահազանգ					1					1					1					**1**
Վարժական հավաքներին ներգրավելու իրավական հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն					15					6					35					**58**
Վարժական հավաքների ժամանակահատվածում տեղաշարժի իրավունքների վերաբերյալ խորհրդատվություն					1															**1**
Վարժական հավաքների կանչվելու դեպքում բուհ-երում սովորող անձանց կրթության իրավունքի ապահովման վերաբերյալ խորհրդատվություն										1										**1**
Պատերազմական գործողությունների մասնակիցներին սոցիալական ապահովության իրավունքի ապահովման/ դրամական փոխհատուցումների տրամադրման վերաբերյալ խորհրդատվություն					1					1										**2**
Բնակարանային պայմանների բարելավման համար հաշվառված															1					**1**

նախկին զինծառայողների, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների հերթացուցակի վերաբերյալ խորհրդատվություն																			
Ընդամենը	**14 դիմող/ 16 խնդիր**	**4**	**2**	**0**	**21 դիմում/ 22 խնդիր**	**31 դիմող /35 խնդիր**	**3**	**3**	**1**	**12**	**25 դիմող/ 26 խնդիր**	**2**	**4**	**0**	**36 դիմում/ 38 խնդիր**	**70 դիմող/ 77 խնդիր**	**9**	**9**	**1**	**69 դիմող/ 72 խնդիր**
																158 դիմող/ 168 խնդիր				

2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած բոլոր անձանց տրամադրվել է բանավոր խորհրդատվություն: **12** զորակոչիկի և պահեստազորում հաշվառված **32** անձանց բացի բանավոր աջակցությունից, տրամադրվել է նաև գրավոր իրավական աջակցություն (տե՛ս աղյուսակ 3): Նշված **12** զորակոչիկներից 8-ի խնդիրը կապված է եղել առողջական խնդիրների հետ, 3-ի խնդիրը վերաբերել է ընտանեկան դրությունից ելնելով պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման իրավունքից օգտվելու հնարավորությանը, 1-ի խնդիրը վերաբերել է առողջական վիճակի զննության իրականացման համար անհրաժեշտ ուղեգրերը տրամադրելու հարցին:

Գրավոր աջակցություն ստացած **32 պահեստազորայիններից 29-ի** խնդիրը կապված է եղել ընտանեկան ու առողջական վիճակով պայմանավորված վարժական հավաքներին ներգրավելու հետ, 3-ի խնդիրը՝ զինվորական գրքույկում մարտական գործողություններին մասնակից լինելու մասին համապատասխան նշման բացակայության հետ:

Աղյուսակ 3. Իրավական աջակցության տրամադրման ընթացակարգը

Իրավական աջակցության տրամադրման ընթացակարգը	2021 ձմեռային զորակոչ	2022 ամառային զորակոչ	2022 ձմեռային զորակոչ	Ընդամենը
Գրավոր	6	8	30	44
Բանավոր	34	44	36	114
Ընդամենը	**40**	**52**	**66**	**158**

Կազմակերպության կողմից գրավոր աջակցության շրջանակներում ուղարկված գրություններին տրամադրված պատասխանների ժամկետները

2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 ձմեռային զորակոչերի ընթացքում դիմած զորակոչիկներից 12-ի խնդրով գրավոր իրավական աջակցության շրջանակներում Կազմակերպության պաշտպանության և անվտանգության բնագավառում քաղաքացիական վերահսկողության ծրագրերի բաժնի կողմից ուղարկվել է ընդհանուր առմամբ 14 գրություն՝ ուղղված ՀՀ պաշտպանության նախարարությանը, ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայությանը:

Աղյուսակ 4. Ուղարկված գրություններին տրամադրված պատասխանների ժամկետները

Պատասխան գրության ժամկետը	Ժամանակին		Ուշացումով		Ի գիտություն ուղարկված/ պատասխան չենթադրող գրություն	Ընդամենը
	Ըստ էության	Ոչ ըստ էության	Ըստ էության	Ոչ ըստ էության		
Ուղարկված գրությունների թիվը	29	0	8	0	7	44

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի իրավական աջակցության արդյունքները

Իրավական գրավոր և բանավոր աջակցության արդյունքում զորակոչիկներից

- *5 հոգի ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար և ազատվել զինվորական ծառայությունից,*
- *3 հոգի ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար /տրամադրվել է տարկետում 3 տարի ժամկետով/,*
- *1 հոգու առողջական խնդիրների առկայության պատճառով տրամադրվել է տարկետում 6 ամիս ժամկետով,*
- *1 հոգու, ով դիմել էր ընտանեկան դրությունից ելնելով տարկետման տրամադրման հիմքերի վերաբերյալ հարցով, տրամադրվել է տարկետում 6 ամիս ժամկետով՝ միջին*

մասնագիտական կրթությունը շարունակելու հիմքով, հետագայում վերջինիս տրամադրվել է տարկետում ևս 6 ամիս ժամկետով ընտանեկան պայմաններից ելնելով,

- *1 հոգու, ով դիմել էր ընտանեկան դրությունից ելնելով տարկետման տրամադրման հիմքերի վերաբերյալ հարցով, տրամադրվել է տարկետում 1 տարի ժամկետով՝ սպորտային որոշակի մարզաձևի հավաքականում ներգրավված լինելու հիմքով,*
- *1 պահեստազորային ազատվել է վարժական հավաքներին մասնակցելուց,*
- *զորահավաքային զորակոչի շրջանակներում պատերազմական գործողություններին մասնակցած 1 պահեստազորայինի զինվորական գրքույկում կատարվել է նշում մարտական գործողություններին մասնակից լինելու վերաբերյալ:*

Այսպիսով, Կազմակերպություն դիմած զորակոչիկներից 5-ը ազատվել են զինվորական ծառայությունից՝ առողջական խնդրների կապակցությամբ, 3-ը ճանաչվել են ժամանակավորածես ոչ պիտանի զինվորական ծառայության համար, 3-ին տրամադրվել է տարկետում մինչև 1 տարի ժամկետով, 1 պահեստազորային ազատվել է վարժական հավաքներին մասնակցելուց, 1 պահեստազորայինի զինվորական գրքույկում կատարվել է նշում մարտական գործողություններին մասնակից լինելու վերաբերյալ:

Նախորդ զորակոչերից շարունակվող գործեր

Հարկ է նշել, որ բացի 2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում դիմած զորակոչիկներից, Կազմակերպությունը նշված ժամանակահատվածում շարունակել է զբաղվել նաև նախկինում դիմած **15 զորակոչիկների գործերով:** Վերջիններիս թվում են այն զորակոչիկները, ովքեր համաձայն չլինելով առողջական վիճակի հետազոտության արդյունքների հետ, Կազմակերպության աջակցությամբ բողոքարկել են իրենց պիտանիության մասին որոշման օրինականությունը ըստ վերադասության կամ դատական կարգով, ինչպես նաև նախկինում դիմած և

տարկետում ստացած զորակոչիկները, ովքեր վերստին Կազմակերպություն են դիմել գրավոր կամ բանավոր իրավական աջակցության նպատակով 2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում:

Կազմակերպությունը շարունակել է **դատական կարգով բողոքարկել 7** զորակոչիկների գործերը:

Այսպիսով, նախկինում դիմած **15 զորակոչիկներից**

- **7-ի** գործերը բողոքարկվում են **դատական** կարգով, մասնավորապես՝
  - 5 զորակոչիկի գործով բողոքարկվում են առողջական վիճակի հիմքով զինծառայության պիտանիության վերաբերալ ԿԲՀ որոշումները,
  - 1 զորակոչիկի գործով Կազմակերպության կողմից դատական կարգով ներկայացվել է պիտանիության վերաբերյալ որոշման անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջ (զորակոչվելուց և վաղաժամ զորացրվելուց հետո)
  - 1 զորակոչիկի գործով պահանջ է ներկայացվել արդարացված զորակոչիկին ոչ նյութական վնասի փոխհատուցման մասին:
- մյուս **7** զորակոչիկներին, ովքեր նախկինում տարկետում են ստացել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչից, Կազմակերպության կողմից պարբերաբար տրամադրվել է իրավական աջակցություն 2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձնեռային զորակոչերի ընթացքում:

Նախկինում դիմած և 2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2020 թ. ձմեռային զորակոչերի ժամանակահատվածում **Կազմակերպության կողմից գրավոր կամ բանավոր** իրավական աջակցություն ստացած 15 զորակոչիկներից

- **4-ը** ճանաչվել են ոչ պիտանի զինծառայության համար, **2 զորակոչիկի** տրամադրվել է տարկետում 1 տարի ժամկետով,
- **1 զորակոչիկի** տրամադրվել է տարկետում 10 ամիս ժամկետով:

Կազմակերպության կողմից փաստաբանի ներգրավմամբ իրավական աջակցության արդյունքում

- առողջական խնդիրներ ունեցող **2 զորակոչիկ** բուժման նպատակով ստացել է տարկետում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից,
- առողջական խնդիրներ ունեցող **1 զորակոչիկի** նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է արարքում հանցակազմի բացակայության հիմքով՝ զորակոչիկը ազատվել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից,
- վերականգվել է առողջական խնդիրներ ունեցող **1 զորակոչիկի** խախտված իրավունքները՝ դատարանի վճռով Կենտրոնական բժշկական հանձնաժողովի ոչ իրավաչափ եզրակացությունը ճանաչվել է անվավեր,
- ընտանեկան պայմաններից ելնելով տարկետման իրավունք ունեցող **1 զորակոչիկ**, ազատվել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից 28 տարին լրանալու հիմքով:
- **1 զորակոչիկ** ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինծառայության համար և տրամադրվել է տարկետում 3 տարի ժամկետով:

2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային եվ 2022 թ. ձմեռային զորակոչերի ժամանակ արձանագրված խնդիրները

1. Անտեսվում են զորակոչիկների առավել լուրջ առողջական խնդիրները և պիտանիության մասին որոշում կայացնելիս զորակոչային բժշկական հանձնաժողովները հիմնվում են առկա այլ առողջական խնդիրների վրա, որոնցով կայացված որոշումը չի համապատասխանում զորակոչիի առողջական վիճակին:
2. Զորակոչիկների առողջական խնդիրները փորձաքննում են ՀՀ կառավարության 2018 թ. թիվ 404-Ն որոշման ոչ համապատասխան հոդվածով, որոնց արդյունքում պիտանիության մասին կայացված որոշումը չի համապատասխանում անձի առողջական վիճակը բնորոշող հոդվածին:
3. Բուժհաստատությունները շարունակում են զորակոչիկներին չտրամադրել վերջիններիս առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերը, դրանով իսկ խախտելով Կառավարության 2018 թվականի 405 որոշման 36-րդ հոդվածը:
4. Տրանսպորտային ծախսերի փոխհատուցման ենթակա գումարի չափը բավարար չէ, ինչը լրացուցիչ բեռ է հատկապես սոցիալապես անապահով ընտանիքների համար:
5. Զորակոչիկներին տրամադրված ուղեգրերում առկա թերությունների (ուղեգրերում առկա ոչ համապատասխան նշումների) պատճառով զորակոչիկները ստիպված են լինում մի քանի անգամ գնալ Երևան, ինչը հավելյալ ֆինանսական խնդիրներ է առաջացնում զորակոչիկների համար:
6. ՀՀ Կառավարության 2018 թ. թիվ 405-Ն որոշման 36-րդ հոդվածով սահմանվում է, որ այն դեպքերում, երբ բժիշկները դժվարանում են վերջնական որոշել զորակոչիկի առողջական վիճակը, բժշկական հանձնաժողովի եզրակացության հիման վրա համապատասխան տարածքային զինվորական կոմիսարը նրան հետազոտման է ուղեգրում բուժհաստատություն: Ուղեգրին կցվում է առողջական վիճակի հետազոտման ակտը: Մինչդեռ, որոշ դեպքերում զորակոչիկները ուղղորդվում են այն բուժհաստատություններ, որտեղ ըստ զորակոչիկի աշխատում է զորակոչի ընթացքում

բժշկական հանձնաժողովի կազմում ընդգրկված համապատասխան բժիշկը, իսկ զորակոչիկի սեփական նախաձեռնությամբ իրականացված հետազոտության արդյունքները հաշվի են առնվում ըստ հայեցողության:

2021 թ. ձմեռային, 2022 թ. ամռային և 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքն ընդգկող ժամանակահատվածում ՀՔԱ Վանաձորի գրասենյակ դիմած պահեստազորում հաշվառված անձանց խնդիրները

2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային և 2022 թ. ձմեռային զորակոչերն ընդգրկող ժամանակահատվածում Կազմակերպություն է դիմել պահեստազորում հաշվառված 69 անձ: Ինչպես զորակոչի, այնպես էլ վարժական հավաքների և զորահավաքային զորակոչի շրջանակներում Կազմակերպությունը արձանագրել է բազմաթիվ խնդիրներ: Պահեստազորում հաշվառված անձանցից 51-ի (89 %) հարցը վերաբերել է վարժական հավաքներին մասնացելու իրավաչափությանը:

Ներկայացնենք հիմնական խնդիրները, որոնց մասին Կազմակերպությունը ստացել է ահազանգեր պահեստազորում հաշվառված ՀՀ քաղաքացիներից:

- **Պահեստազորում հաշվառված քաղաքացիներին վարժական հավաքներին ներգրավելուց առաջ նրանք չեն ենթարկվում առողջական խնդիրների պատշաճ բշկական զննության**

Ինչպես զորակոչի, այնպես էլ վարժական հավաքների և զորահավաքային զորակոչի ժամանակ անձանց բուժզննություններն իրականացվում են ոչ պատշաճ կերպով: Պահեստազորում հաշվառված անձինք ունենալով առողջական խնդիրներ և համալիր բուժզննությունների չենթարկվելով՝ կանչվում են վարժական հավաքների կամ զորակոչվում են զորահավաքային զորակոչի շրջանակներում: Երբեմն մեկից ավելի

առողջական խնդիր ունեցող անձինք մեկ խնդրով են ուղեգրվում զննությունների, ինչը բնորոշ է նաև զորակոչին:

- **Գործնականում պահեստազորում հաշվառված և ԲՈՒՀ-երում սովորող քաղաքացիների կրթության իրավունքը խախտվում է վարժական հավաքներին ներգրավվելու դեպքում**

Թեև ԲՈՒՀ-երում սովորող պահեստազորայինների բացակայությունները համարվում են հարգելի և բաց թողված դասաժամերը ենթակա են լրացման վարժական հավաքներին քաղաքացիների մասնակցության դեպքում, սակայն գործնականում բաց թողնված դասաժամերը չեն լրացվում: Հետևաբար ուսանողների համար վարժական հավաքներին ներգրավվելը խնդիրներ է ստեղծում կրթական գործընթացում:

- **Պատերազմական գործողությունների մասնակիցները զրկվում են օրենքով սահմանված սոցիալական երաշխիքներից օգտվելուց՝ զինվորական գրքույկում մասնակցության մասին գրառման բացակայության պատճառով**

Որոշ քաղաքացիների զինգրքույկներում չեն կատարվում համապատասխան նշումներ մարտական գործողություններին մասնակցության վերաբերյալ, ինչի հետևանքով նրանք զրկվում են օրենքով սահմանված երաշխիքներից և արտոնություններից օգտվելու իրավունքից:

- **Օրենքով դեռևս հստակ սահմանված չէ ընտանեկան պայմաններից ելնելով վարժական հավաքների կանչվելու սահմանափակումների վերաբերյալ**

Որոշ դեպքերում ընտանեկան դրությամբ պայմանավորված գործնականում անհնարին է պահեստազորում հաշվառված քաղաքացու մասնակցությունը վարժական հավաքներին, մասնավորապես՝ այն դեպքերում, երբ վերջինիս խնամքի տակ են գտնվում անչափահաս երեխաները, հղի կինը, հաշմանդամություն ունեցող կամ կենսաթոշակի տարիքի ծնողները և այլն: Գործնականում նման դեպքերում անձանց՝ հավանքերին

մասնակցության հարցը կարգավորվում է անհատական մոտեցմամբ՝ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ղեկավարի կամ ՀՀ պաշտպանության նախարարի հայեցողությամբ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հաշվի առնելով այն հանգամանքը, զորակոչի կազմակերպման և անցկացման ընթաքում առկա են խնդիրներ, որոնք կրում են պարբերական բնույթ, շարունակաբար արձանագրվում են յուրաքանչյուր զորակոչի ժամանակ և մինչ օրս լուծված չեն՝ ներկայացնում ենք համապատասխան առաջարկություններ օրենսդրական և իրավակիրառ պրակտիկայում փոփոխություն իրականացնելու համար.

ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանումներին

1. Բացառել զորակոչիկի առողջական վիճակի զննության վերաբերյալ անհրաժեշտ բժշկական փաստաթղթերի, ինչպես նաև ԿԲՀ որոշումների օրինակների տրամադրման մերժման դեպքերը:
2. Ապահովել բոլոր՝ այդ թվում ԼԳԲՏ համայնքի զորակոչիկների անձի գաղտնիության իրավունքի պաշտպանությունը, հատկապես՝ բժշկական զննության իրականացման ընթացքում:
3. Բացառել զորակոչի ընթացքում բժշկական հետազոտություն անցնելու համար երկար ժամանակով սպասեցնելու արատավոր պրակտիկան և սահմանել օրվա ընթացքում առողջական վիճակի հետազոտություն անցնող զորակոչիկների առավելագույն թվաքանակը և ժամանակացույցը:
4. Պահեստազորում հաշվառված անձանց՝ հայտարարված վարժական հավաքների կամ զորահավաքային զորակոչի շրջանակներում ներգրավելիս իրականացնել վերջիններիս պատշաճ, օբյեկտիվ բժշկական զննությունն ու փորձաքննությունը:
5. Հայտարարված վարժական հավաքների կամ զորահավաքային զորակոչի շրջանակներում պահեստազորառում հաշվառված անձանց զորակոչելիս հաշվի առնել նրանց զինվորական մասնագիտությունը:

6. Պահեստազորում հաշվառված անձանց վարժական հավանքների ներգրավելիս հաշվի առնել և պահպանել օրենքով սահմանված ժամկետները:

Բժշկական հաստատություններին.

1. Զորակոչիկներին և պահեստազորում հածվառված անձանց ենթարկել համալիր հետազոտությունների՝ նրանց իրական առողջական վիճակը բացահայտելու համար: Միևնույն ժամանակ տրամադրել նրանց առողջական վիճակի վերաբերյալ փաստաթղթերի օրինակները:
2. Պետության կողմից տրամադրվող անվճար բուժօգնության շրջանակներում իրականացնել արդյունավետ և որակյալ անվճար բժշկական միջոցառումներ՝ ներառյալ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիա և այլ լաբորատոր կամ գործիքային հետազոտություններ, որոնք կապահովեն զորակոչիկների առողջական խնդիրների բացահայտման արդյունավետությունը:

Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին.

1. Բժշկական փորձաքննություն իրականացնելիս ապահովել անձի առողջական վիճակի գաղտնիության իրավունքը:
2. Մի քանի առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկի բժշկական զննությունը իրականացնել բոլոր խնդիրներով և առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունը ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ՝ անկախ մեկ խնդրով պիտանիության վերաբերյալ որոշումից և անկախ այն հանգամանքից, թե երբ է առաջացել առողջական խնդիրը:
3. Բացառել զորակոչիկների կողմից ներկայացված գանգատները չարձանագրելու պրակտիկան: Անկախ այդ գանգատների հետագա հետազոտման արդյունքներից՝

դրանք պատշաճ արձանագրել անձի առողջական վիճակի հետազոտման ակտերում:

4. Հաշվի առնել սեզոնային հիվանդությունների բնույթը և առանձնահատկությունները, և միայն դրա հիման վրա կայացնել համապատասխան որոշում:

Կենտրոնական բժշկական հանձնաժողովին.

1. Տրամադրել հիմնավորված եզրակացություններ, եթե դրանք տարբերվում են զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ ակտերով հաստատված ախտորոշումներից:
2. Միմյանցից տարբերվող հիվանդությունների կամ հիվանդությունները սահմանող հոդվածների կիրառման դեպքում կայացնել հիմնավորված որոշում:
3. Ապահովել բոլոր անհրաժեշտ հետազոտությունների համար նախատեսված ուղեգիր՝ զորակոչիկի պիտանիության վերաբերյալ ճիշտ և իրական որոշում կայացնելու համար:
4. Հաշվի առնել առանձին հիվանդությունների «սեզոնային» բնույթը, օրինակ՝ «անգիոտրոֆոնևրոզ» հիվանդությունը, և հետազոտություններն ու փորձաքննությունը կազմակերպել ձմեռային զորակոչի ընթացքում: Ի դեպ՝ Կենտրոնական բժշկական հանձնաժողովն ունի «մինչև մեկ տարի» ժամկետով տարկետում տրամադրելու հայեցողություն, և հաշվի առնելով, որ նշված հիվանդությունն առավել արտահայտվում է ցուրտ եղանակին, ապա հիվանդության իրական պատկերը բացահայտելու համար ապահովել նման հիվանդությունների առկայության մասին բժշկական հետազոտությունը դրանց սրման ժամանակահատվածում:
5. Զորակոչը կազմակերպող և իրականացնող իրավասու մարմինների ընդունած որոշումների, գործողության կամ անգործության դեմ բերված բողոքների հիման վրա հարուցված վարչական վարույթի ընթացքում պատշաճ քննարկման առարկա

դարձնել բողոքի փաստական և իրավական հիմքերը, բողոքի քննարկման արդյունքներով ընդունել փաստարկված և պատճառաբանված որոշում:

Պարտադիր զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործերի վերաբերյալ.

1. Հաշվի առնել, որ անձը, օգտվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով և իրավական այլ ակտերով երաշխավորված հիմնարար իրավունքներից, փորձելով պարզել վարչական մարմնի կողմից դրսևորած վարչարարության իրավաչափությունը, վիճարկում է իրեն պարտադիր զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի ճանաչելու մասին որոշումը, և անձի արարքին քրեաիրավական գնահատական տալ միայն վարչական ակտի, գործողության կամ անգործության վիճարկման արդյունքում ընդունված վերջնական փաստաթղթի (դատական ակտ, վարչական մարմնի որոշում և այլ) անբողոքարկելի դառնալուց հետո:
2. Վերը նշված հանգամանքը հաշվի առնել նաև քրեական գործերի դատական քննության ընթացքում:
3. Նախաքննության ընթացքում դատաբժշկական հանձնաժողովային փորձաքննություն նշանակելու փոխարեն նշանակել դատաբժշկական և ռազմաբժշկական համալիր փորձաքննություն:
4. Նախաքննության ընթացքում հայտարարված հերթական զորակոչի ընթացքում զորակոչիկի անձնական գործը չուղարկել և զորակոչիկին չհորդորել ներկայանալ ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության տարածքային ստորաբաժանում՝ զինվորական ծառայությանը պիտանի կամ սահմանափակումով պիտանի լինելու մասին հարցը կրկին պարզելու, և այդ հանգամանքով պայմանավորված՝ չձգձգել նախաքննության ընթացքը:

Օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ.

ՀՀ Կառավարությանը, ՀՀ ԱԺ հանձնաժողովներին, ՀՀ ԱԺ պատգամավորներին.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելիս սահմանել միաժամանակ երկու և ավելի հիվանդությունների առկայության դեպքում անձին զինվորական ծառայության զորակոչելու գնահատման մեխանիզմը և իրավական հիմքերը, և հրաժարվել ըստ առանձին հիվանդությունների գնահատման հիման վրա զորակոչիկների պիտանիության մասին որոշում կայացնելու մոտեցումից՝ վերաացնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշմամբ միաժամանակ հինգ հիվանդության առկայությամբ տարկետում սահմանելու դրույթը:
2. Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում հստակեցնել «ձգձգվող» կամ «բուժմանը դժվար ենթարկվող» հասկացությունները և սահմանել կոնկրետ ժամկետներ կամ ժամանակահատվածներ ըստ յուրաքանչյուր հիվանդության՝ ելնելով հիվանդության ախտորոշման համար անհրաժեշտ ժամանակից:
3. Պիտանիության աստիճանը որոշող դրույթները սահմանելիս հաշվի առնել անձի առողջական խնդիրների ծանրության աստիճանը:
4. Վերանայել «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված կատեգորիայի անձանց շրջանակը, մասնավորապես՝ «Ընտանեկան պայմաններից ելնելով (անչափահաս երեխա/ներ ունեցող ծնողների զորակոչի դեպքում, նույն ընտանիքից միաժամանակ մեկից ավելի անձանց զորակոչի դեպքում, ընտանիքի միակ կերակրողը հանդիսանալու դեպքում, հաշմանդամություն ունեցող ծնող/ների դեպքում և այլն)»:

5. Հստակ սահմանել «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածով սահմանված ռազմատրասնպորտային պարտականության շրջանակներում քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող տրանսպորտային միջոցների ներգրավման կարգը:
6. Առանձին սահմանել զորահավաքային զորակոչի իրականացման կարգը, ինչպես, օրինակ, սահմանված է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչի դեպքում:
7. Պարտադիր զինվորական ծառայության հերթական զորակոչի ընթացքում ընդունված վարչական ակտերի, գործողության կամ անգործության դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերով օրենքով ամրագրել վարչական գործերի քննության և դրա շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների կատարման այնպիսի ժամկետներ, որը հնարավորություն կընձեռի դատարանի որոշումն ունենալ մինչև զորակոչի ավարտը, ինչպես, օրինակ, սահմանված է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

2021 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ, 2022 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ և 2022 Թ. ԶՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴԻՄԱԾ ՈՐՈՇ ԶՈՐԱԿՈՉԻԿԻ ԳՈՐԾԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ

1. Մարզերից Երևան բժշկական զննությունների ուղեգրված զորակոչիկները ստիպված են երկար սպասել մինչև զննության ենթարկվելը: Որոշ դեպքերում բժշկական հաստատությունները նույն օրվա ընթացքում չեն հասցնում իրականացնել զննությունները՝ գոյացած հերթի պատճառով: Արդյունքում զորակոչիկները ստիպված են հետ վերադառնալ և բժշկական զննության ներկայանալ հաջորդ օրը: Մարզերից Երևան մեկնելու համար կրկնակի ճանապարհածախսը ոչ միշտ է փոխհատուցվում պետության կողմից, իսկ տրամադրված գումարը հաճախ բավարար չէ, քանի որ այն ներառում է միջքաղաքային և ներքաղաքային հանրային տրանսպորտի ուղևորավարձը, մինչդեռ ժամանակի սղության պատճառով զորակոչիկները շատ հաճախ օգտվում են տաքսի ծառայություններից, որի արժեքը առավել բարձր է:

- Վ. Մ.

2022 թ. ձմեռային զորակոչի շրջանակներում Վ. Մ.-ն առողջական խնդիրների պատճառով ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շրակի մարզի տարածքային ստորաբաժանման կողմից ուղեգրվել է Մալայանի անվան ակնաբուժական կլինիկա՝ բուժզննություն անցնելու նպատակով, սակայն մի քանի ժամ սպասելուց հետո զորակոչիկին հայտնել են, որ չեն կարող իրեն սպասարկել, և որ նա պետք է ներկայանա մեկ այլ օր կամ պետք է մնա Երևանում և ներկայանա հաջորդ օրը: Սակայն ընտանիքը վճարունակ չէ և չի չի կարող հոգալ Երևանում մնալու ծախսերը: Արդյունքում զորակոչիկը ստիպված է եղել տուն վերադառնալ: Մինչդեռ հաջորդ անգամ

բուժզննության ներկայանալու համար նախատեսված տրանսպորտային ծախսերը զորակոչիկը ստիպված է եղել հոգալ անձամբ:

Բուժզննության նպատակով մարզից Երևան ուղևորվելու համար ՀՀ ՊՆ զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության ստորաբաժանումների կողմից զորակոչիկին տրամադրվել է 3000 ՀՀ դրամ, որը բավարար չէ, քանի որ զորակոչիկները հանրային տրանսպորտից օգտվելու դեպքում երկար ժամանակ են վատնում, իսկ տաքի ծառայությունների վճարը առավել բարձր է:

2. Զորակոչիկների թերի զննությունների արդյունքում կայացվում է պիտանիության մասին որոշում:

3. Զորակոչիկները չեն ուղեգրվում առավել թանկարժեք հետազոտությունների: Արդյունքում՝ կայացվում է պիտանիության մասին որոշում թերի զննությունների հիման վրա:

- **Վ. Մ.**

Զորակոչիկ Վ.Մ.-ն ունի մի քանի առողջական խնդիրներ, սակայն ուղեգրվել է բժշկական զննությունների միայն մեկ առողջական խնդրի կապակցությամբ: Մյուս առողջական խնդրի կապակցությամբ, որի ախտորոշման համար անհրաժեշտ է համեմատաբար թանկարժեք բժշկական զննություն, զորակոչիկը չի ուղեգրվել: Արդյունքում, պիտանիության մասին որոշումը կայացվել է թերի բուժզննությունների հիման վրա:

- **Ս. Թ.**

Զորակոչիկ Ս. Թ.-ին նախկինում մեկ անգամ տրամադրվել է տարկետում՝ բուժման նպատակով: Հաջորդ զորակոչին Ս. Թ.-ն ճանաչվել է պիտանի ծառայության համար թերի բժշկական զննությունների արդյունքում: Կազմակերպության պահանջով զորակոչիկը

ներկայացվել է ԿԲՀ-ի կրկնակի փորձաքննության, որից հետո ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Կրկին, սխալ կամ ոչ լիարժեք բուժզննությունների պատճառով զորակոչիկների մոտ սխալ պիտանելիություն է որոշվում: Թերի բուժզննությունները միայն զորակոչերով չեն սահմանափակվում:

4. Բուժզննությունների արդյունքում երկու տարբեր ախտորոշումների դեպքում զորակոչիկը չի ուղեգրվում ստուգիչ զննության: Բացի այդ երբեմն հաշվի չեն առնվում զորակոչիկների նախաձեռնությամբ իրականացված բուժզննությունների արդյունքները և ԿԲՀ կողմից որոշում է կայացնում ոչ ի օգուտ զորակոչիկի:

- **Վ. Ա.**

Զորակոչիկին նախկինում մեկ անգամ տրամադրվել է տարկետում տեսողության խնդրի կապակցությամբ: Հաջորդ զորակոչին նա ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար: Չհամաձայնելով հետազոտությունների արդյունքների հետ, զորակոչիկը նույն բժշկական հաստատությունում սեփական միջոցներով անցել է հետազոտություն, որի արդյունքում տրվել է այլ ախտորոշում, որն ակնհայտորեն տարբերվել է զորակոչի շրջանակներում իրականացված զննության արդյունքից:

ՀՀ կառավարության 2018 թ. N 405-Ն որոշման 41-րդ հոդվածի համաձայն՝ «*Ախտորոշումը ճշտելու նպատակով՝ բավարար տվյալների բացակայության կամ համապատասխան լաբորատոր-գործիքային հետազոտություն անցած չլինելու կամ հետազոտական փաստաթղթերի միջև հակասությունների դեպքերում, ԿԲՀ-ն կարող է հետազոտությունը պահանջող բժիշկ-մասնագետի գրավոր հիմնավորմամբ զորակոչիկին ռազմաբժշկական կամ քաղաքացիական բժշկական հաստատություն լրացուցիչ, ստուգիչ կամ հսկողական հետազոտության ուղեգրելու վերաբերյալ տալ եզրակացություն»:*

Փաստացի զորակոչիկի հետազոտական փաստաթղթերի միջև առկա են հակասություններ, սակայն զորակոչի ընթացքում վիջինս չի ուղեգրվել ստուգիչ հետազոտության, ինչի արդյունքում կայացվել է որոշում պիտանիության վերաբերյալ:

5. Երբեմն զորակոչային հանձնաժողովը զորակոչիկներին չի ուղեգրում լրացուցիչ զննության, իսկ ուղեգրելու դեպքում իրականացված զննությունները արդյունավետ չեն, քանի որ չեն արտացոլում զորակոչիկների առողջական վիճակի իրական պատկերը, իսկ զորակոչիկների գանգատները հաճախ անտեսվում են:

6. Որոշ բժշկական հաստատությունների կողմից զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ ախտորոշումները տրամադրվում են առանց համապատասխան բուժզննություններ կատարելու:

- **Ս. Պ.**

Զորակոչիկ Ս. Պ.-ին նախկինում 3 անգամ տրամադրվել է տարկետում՝ առողջական լուրջ խնդրիների կապակցությամբ: Այնուամենայնիվ, 2022 թ. ձմեռային զորակոչին Ս.Պ-ն ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար՝ թերի բուժզննությունների արդյունքում: Ավելին, որոշ առողջական խնդիրների կապակցությամբ զորակոչիկին ախտորոշումէ տրվել առանց հետազոտության իրականացման:

Ճանաչվելով պիտանի զինվորական ծառայության համար՝ զորակոչիկ Ս.Պ-ն դիմել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակ և միայն Կազմակերպության դիմումի հիման վրա, ուղեգրվելով լրացուցիչ հետազոտությունների, զորակոչիկը ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

7. Զորակոչիկների բժշկական զննությունների արդյունքների վերաբերյալ փաստաթղթերը ոչ ամբողջական են տրամադրվում, իսկ երբեմն դրանք «կորչում են» ՀՀ ՊՆ ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանումներից:

1. **Կ. Ա.**

Զորակոչիկ Կ. Ա.-ն ունի առողջական խնդիրներ, որոնց կապակցությամբ նրան նախկինում երկու անգամ տրամադրվել է տարկետում: Զորակոչիկը պահանջել է առողջական վիճակի զննության արդյունքները, սակայն ԶԶՀԾ տարածքային ստորաբաժանումում հայտնել են, որ դրանք «կորել են»: Հետագայում զորակոչիկին տրամադրել են առողջական փստաթղթերի ոչ ամբողջական փաթեթ:

Բացի այդ զորակոչիկին ուղեգրել են համապատասխան զննությունների միայն ծնողի կողմից բանավոր բողոք ներկայացնելուց հետո:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

1998 Թ-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-ԸՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԱԶԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ուսումնասիրել է 1998 թ-ից ի վեր մինչեւ 2023 թ. հունվարի 31-ը ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումները, որոնց հիման վրա առանձին քաղաքացիների տրամադրվում է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կամ ազատում տարբեր հիմքերով:

Քաղաքացիներին Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման տրամադրման մասին որոշում է կայացվում համաձայն 2017 թ. նոյեմբերի 17-ի «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի[13] 21-րդ և 22-րդ հոդվածների 5-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն, N 451-Ն, N 457-Ն որոշումների:

Մասնավորապես՝ «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի ***21-րդ հոդվածի 5-րդ կետով*** սահմանվում է՝ « …քաղաքացինկարող **էբացառիկ դեպքերում ազատվել** պարտադիր զինվորական ծառայությունից՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով»:

Նշված օրենքի ***22-րդ հոդվածի 5-րդ կետով*** սահմանվում է, որ «…***Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում*** նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից **տարկետում կարող է տրվել նաև ՀՀ կառավարության որոշմամբ**՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով»: Ի դեպ 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-364-Ն որոշումը[14]:

[13] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=131552
[14] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169380

Փոփոխությունը վերաբերում է ՀՀ կառավարության որոշմամբ գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող, մասնավորապես՝ **բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետմանը՝ մինչև 28 տարին լրանալը, նախկինում գործող 27-ի փոխարեն:**

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի ***N 450-Ն*** որոշման համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ***տարկետում է տրամադրվում սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին***[15]:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի ***N 451-ն որոշման***՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ***տարկետում է տրամադրվում գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին***[16]:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի ***N 457-ն որոշման***՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ***տարկետում է տրամադրվում մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին***[17]:

Քաղաքացիները Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ***ազատվում են ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89-Ն*** «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին» որոշման համաձայն[18]՝ մշակույթի և արվեստի, սպորտի, ինչպես նաև գիտական աստիճան ունեցող քաղաքացուն կրթության և գիտության բնագավառներում գործունեության հիմքով:

[15] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152177
[16] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145549
[17] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135030
[18] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=128187

Ի դեպ 2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-363-Ն որոշումը[19]:

Օրենքի 21-րդ հոդվածը լրացվեց 5.1-ին մասով: Մասնավորապես՝ ***«Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը, որպես օտարերկրյա քաղաքացի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերել որևէ մարզաձևի՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում*** *(որևէ տարիքային խմբում)* ***հանդես գալու համար*** *և մինչև 2021 թվականի մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրել է:* Սույն օրենքը գործել է մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

Համաձայն մեր ուսումնասիրության՝ 1998-ից մինչեւ 2023 թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում զինվորական ծառայությունից **տարկետում ստացել են 2712** քաղաքացի և **ազատվել 344-ը**: Ընդ որում, ազատված անձանցից 56-ը պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել են միանգամից՝ առանց մինչ այդ տարկետում ստանալու: Իսկ 288 անձ զինվորական ծառայությունից ազատվել է նախկինում մեկ կամ ավելի անգամ տարկետում ստանալուց հետո: 1998 թվականից մինչև 2018 թվականը տարկետում է ստացել 1450 քաղաքացի, 2019-ից 2023 թվականներին՝ 1262 քաղաքացի:

2049 հոգի տարկետում է ստացել 1 անգամ (ընդ որում նրանցից 3-ին տրամադրված տարկետումը հետագայում դադարեցվել է որոշակի սպորտաձևի հավաքական թիմի կազմում նրանց ընդգրկված չլինելու պատճառով):

685 անձի տարկետում տրամադրվել է **ավելի քան մեկ անգամ**: Մասնավորապես՝

- 2 անգամ տարկետում է ստացել՝ **424** հոգի,
- 3 անգամ՝ **184** հոգի,
- 4 անգամ՝ **33** հոգի,
- 5 անգամ՝ **16** հոգի,
- 6 անգամ՝ **9** հոգի,
- 7 անգամ՝ **10** հոգի,
- 8 անգամ՝ **6** հոգի,

[19] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169377

- 9 անգամ՝ **3** հոգի: (տե՛ս աղյուսակ 1):

Աղյուսակ 1. 1998-ից մինչ 2023 թ. հունվարի 31-ը ՀՀ Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած կամ ազատված անձանց թիվն ըստ հիմքերի եւ տարկետումների հաճախականության

Տարկետման և ազատման հիմքերը	Տարկետումների թիվն ըստ անձանց	Ազատումների թիվն ըստ անձանց	Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետումների հաճախականությունը և դրանց արդյունքում ազատումների թիվը			
			Տրամադրված տարկետումների հաճախականությունը՝ ներառյալ նույն անձին 1 և/կամ մի քանի անգամ տրամադրված տարկետումների թիվը		Տարկետումից հետո ազատում անձ	Միանգամից ազատում
Կրթական	1032	0	1159			
			1 անգամ	942		
			2 անգամ	61		
			3 անգամ	23		
			4 անգամ	4		
			5 անգամ	2		
Հոգևորական	404	186	1008		168	18
			1 անգամ	133	25	18
			2 անգամ	99	53	
			3 անգամ	110	69	
			4 անգամ	22	9	
			5 անգամ	12	1	
			6 անգամ	9	6	
			7 անգամ	10	2	
			8 անգամ	6	0	
			9 անգամ	3	3	
Սպորտ	313	80	478		63	17
			1 անգամ§§§§§	199	15	17
			2 անգամ	67	21	
			3 անգամ	43	26	
			4 անգամ	4	1	
Հիմքը նշված չէ	61	7	65		4	3

§§§§§3 դեպքում տարկետումը դադարեցվել է որոշակի սպորտաձևի հավաքական թիմի կազմում 3 քաղաքացիների ընդգրկված չլինելու հիմքով

			1 անգամ	57	4	3
			2 անգամ	4		
Մշակութային	**61**	**10**	**91**		**6**	**4**
			1 անգամ	44	3	3
			2 անգամ	10	1	
			3 անգամ	3	1	
			4 անգամ	2	1	
			5 անգամ	2		
Գիտական-կրթական	**834**	**26**	**1026**		**24**	**2**
			1 անգամ	649	23	2
			2 անգամ	179	1	
			3 անգամ	5		
			4 անգամ	1		
Գիտական և գիտատեխնիկական գործունեություն	**1**	**35**	**1**		**23**	**12**
			1 անգամ	1	19	12
			2 անգամ		4	
Աշխատանքային	**6**	**0**	**9**			
			1 անգամ	3		
			2 անգամ	3		
Ընդամենը	**2712**	**344**	**3837**		**288**	**56**

Զինծառայությունից 2712 տարկետում ստացած և 348 ազատված անձանց վերաբերյալ 1998 թ-ից մինչ 2023 թ-ի հունվարի 31-ը Կառավարության կողմից ընդունվել է **797** որոշում, որից տարկետման վերաբերյալ՝ **702** որոշում, ազատման վերաբերյալ՝ **95** ***(տե՛ս աղյուսակ 2):***

Աղյուսակ 2. 1998-ից մինչ 2023 թ. հունվարի 31-ը ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած կամ ազատված անձանց վերաբերյալ ընդունված որոշումների թիվն ըստ տարկետման և ազատման հիմքերի

Տարկետման և ազատման հիմքերը	Տարկետման մասին որոշում	Ազատման մասին որոշում	Ընդամենը
Կրթական	451	0	**451**
Հոգևորական	37	20	**57**
Մշակութային	50	10	**60**
Սպորտ	74	27	**101**
Հիմքը նշված չէ	37	3	**40**
Գիտական-կրթական	39	26	**65**
Աշխատանքային	3	0	**3**
Գիտական-գիտատեխնիկական	1	9	**10**
Ընդամենը	**702**	**95**	**797**[21]

ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տրամադրված տարկետումների վերաբերյալ տվյալներ

1998-ից մինչեւ 2023 թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում **կրթությունը** շարունակելու նպատակով ընդունվել է **451** տարկետում տրամադրելու որոշում **1032**[22]քաղաքացիների վերաբերյալ, որոնք սովորում են հանրակրթական, հիմնական

[21]Որոշուների թիվում ներառված են բոլոր առանձին ընդունված որոշումները՝ ներառյալ մեկ անձի վերաբերյալ մի քանի անգամ կայացված առանձին որոշումների թիվը:
[22]Այն անձինք, ովքեր նախկինում կրթական հիմքով տարկետում ստանալուց հետո նաև տարկետում են ստացել կամ ազատվել են գիտական-կրթական հիմքով, Կազմակերպության կողմից ներառվել են գիտական-կրթական հիմքով տարկետում ստացածների թվում:

կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով, ինչպես նաև բարձրագույն ուսումնականհաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ:

Նշենք, որ 2021 թվականի ապրիլի 19-ին «Զինվորական ծառայության եվ զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում[23] կատարվեց փոփոխություն, համաձայն որի՝ «...միջին մասնագիտական կրթական ծրագրով ուսումնառությունը չավարտած, ավարտական կուրսում սովորող և պարտադիր զինվորական ծառայության զորակոչի ենթակա քաղաքացուն ՀՀ կառավարության որոշմամբ մեկ անգամ տրվում է տարկետում՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան նրա 20 տարին լրանալու օրը»[24]: Նախկինում տարկետումը տրամադրվում էր մինչև վերջիններիս 19 տարին լրանալու օրը:

Հայ Առաքելական եկեղեցու **404** հոգևոր սպասավորների և/կամ հոգևոր ճեմարաններում ուսուցանող սաների վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման վերաբերյալ **37** որոշում:

Մշակութային (մշակույթի և արվեստի բնագավառում ունեցած բացառիկ ընդունակությունների) հիմքով **60** անձի վերաբերյալ կայացվել է տարկետման մասին **50** որոշում:

Սպորտի բնագավառում բացառիկ ունակություններ ցուցաբերած **313** անձանց վերաբերյալ ընդունվել է տարկետման մասին **74** որոշում:

Գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **1026** անձի վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման մասին **39** որոշում:

[23] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=152097
[24] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=152087

Աշխատանքային հիմքով տարկետում տրամադրելու վերաբերյալ ընդունվել է **3** որոշում **6** անձի վերաբերյալ:

61 անձի վերաբերյալ տարկետման մասին **37** որոշումներում **չի նշվում տարկետման պատճառը**:

Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տրամադրվող ազատումների վերաբերյալ մանրամասն տվյալներ

Հայ Առաքելական եկեղեցու **190 հոգևոր սպասավորների** եւ/կամ հոգևոր ճեմարաններում ուսուցանող սաների վերաբերյալընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման **վերաբերյալ 20 որոշում**: Նշված անձանցից 168-ը նախկինում ստացել է տարկետում մեկ կամ մի քանի անգամ, իսկ 18-ը միանգամից ազատվել են զինվորական ծառայությունից՝ առանց նախկինում տարկետում ստանալու:

Մշակույթի բնագավառում ցուցաբերած բացառիկ ընդունակությունների համար **10** անձի վերաբերյալ կայացվել է զինծառայությունից ազատման մասին **10** որոշում: Ընդ որում նրանցից 5-ը ազատվել են զինծառայությունից մեկ կամ ավելի անգամ տարկետում ստանալուց հետո, իսկ 3 հոգին՝ միանգամից:

Սպորտի բնագավառում բացառիկ ունակություններ ցուցաբերած **80** անձանց վերաբերյալ ընդունվել է զինծառայությունից ազատման մասին **27** որոշում: Նրանք բոլորը նախկինում մեկ կամ մի քանի անգամ ստացել են տարկետում:

Գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **26** անձի վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման մասին 26 որոշում:

3 անձի դեպքում զինծառայությունից ազատման վերաբերյալ ընդունված **3** որոշումներում չի նշվում ազատման հիմքը: Ընդ որում նրանցից 1-ը նախկինում ստացել է տարկետում, իսկ 2-ը միանգամից ազատվել են զինծառայությունից՝ առանց նախկինում տարկետում ստանալու:

5 տարվա կտրվածքով դիտարկենք 1998 թ-ից ի վեր մինչեւ 2023 թ. հունվարի 31-ը ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումները, որոնց հիման վրա առանձին քաղաքացիների տրամադրվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կամ ազատում տարբեր հիմքերով:

Դիտարկենք ՀՀ կառավարության որոշմամբ տրամադրված տարկետման և ազատման մասին որոշումների հաճախականությունը և պատճառները 1998 – 2023 թթ ժամանակահատվածի հնգամյա կտրվածքով:

1. 1998-2002 թվականներին Կառավարության կողմից ընդունված որոշումների համաձայն 98 հոգի ստացել է տարկետում հետևյալ հիմքերով՝
   - **հոգևորական՝ 60**
   - **կրթական՝ 18**
   - **աշխատանքային՝ 9**
   - **մշակութային՝ 9**
   - **սպորտ՝ 1**
   - **1 քաղաքացու դեպքում տարկետման հիմքը նշված չէ:**

Նրանցից 78-ը տարկետում ստացել են 1 անգամ, 6-ը՝ 2, 2-ը՝ 3 անգամ, 12 հոգի հետագայում՝ 2002 թվականից հետո, ազատվել է զինվորական ծառայությունից:

2. 2003-2007 թվականներին տարկետում է ստացել 259 հոգի հետևյալ հիմքերով՝
   - **կրթական՝ 151**
   - **հոգևորական՝ 72**
   - **մշակութային՝ 17**
   - **19 քաղաքացու դեպքում տարկետման հիմքը նշված չէ:**

164 հոգի տարկետում է ստացել 1 անգամ, 7 քաղաքացի՝ 2 անգամ, 2 քաղաքացի 3 և 1 քաղաքացի 4 անգամ: Տարկետում ստացածներից 85-ը հետագայում՝ 2007

թվականից հետո, ազատվել են զինվորական ծառայությունից: Միևնույն ժամանակ, դիտարկվող ժամանակահատվածում Կառավարության կողմից ընդունված որոշումների համաձայն 16 քաղաքացի ազատվել է զինվորական ծառայությունից, որոնցից 14-ը ազատվել են միանգամից, իսկ 2-ը 1 անգամ տարկետում ստանալուց հետո:

3. 2008-2012 թվականներին Կառավարության որոշմամբ տարկետում է ստացել 1057 քաղաքացի հետևյալ հիմքերով՝
   - **կրթական՝ 573**
   - **հոգևորական՝ 426**
   - **սպորտ՝ 34**
   - **մշակութային՝ 19**
   - **5 քաղաքացու դեպքում տարկետման հիմքը նշված չէ:**

1 անգամ տարկետում է ստացել 474 քաղաքացի, 2 անգամ՝ 92 հոգի, 3 անգամ՝ 45 հոգի, 4 անգամ՝ 12 հոգի, 5 անգամ՝ 4 հոգի և 6 անգամ 6 հոգի: Ի դեպ, տարկետումների հաճախականությունը ներառում է նաև նշված հնգամյակն ընդգրկող ժամանակահատվածից հետո տարամադրված տարկետումների թիվը: Բացի այդ, տարկետում ստացած քաղաքացիներից 424-ը հետագայում՝ 2012 թվականից հետո, ազատվել են զինվորական ծառայությունից: Միաժամանակ դիտարկվող ժամանակահատվածում 85 քաղաքացի ազատվել է զինվորական ծառայությունից, որոնցից 5-ը ազատվել են միանգամից՝ առանց նախկինում տարկետում ստանալու, 16 քաղաքացի ազատվել է զինվորական ծառայությունից 1 անգամ տարկետում ստանալուց հետո, ևս 39, 23 և 2 քաղաքացի ազատվել են զինվորական ծառայությունից համապատասխանաբար 2, 3 և 4 անգամ տարկետում ստանալուց հետո:

4. 2013-2017 թվականներին տարկետում է ստացել 766 քաղաքացի հետևյալ հիմքերով՝
   - **հոգևորական՝ 450**
   - **սպորտ՝ 142**
   - **կրթական՝ 131**
   - **գիտակրթական՝ 10**
   - **մշակութային՝ 5**
   - **28 քաղաքացու դեպքում տարկետման հիմքը նշված չէ:**

Նշվածներից 169 հոգի տարկետում է ստացել 1 անգամ, 76 հոգի տարկետում է ստացել 2 անգամ, 101 հոգի ՝ 3 անգամ, 17 հոգի ՝ 4 անգամ, 11 հոգի ՝ 5 անգամ, 3 հոգի՝ 6 անգամ, 10 քաղաքացի՝ 7 անգան, 6 հոգի ՝ 8 անգամ և 3 հոգի 9 անգամ: Ի դեպ, տարկետումների հաճախականությունը ներառում է նաև նշված հնգամյակն ընդգրկող ժամանակահատվածից հետո տարամադրված տարկետումների թիվը: Դիտարկվող հնգամյակում Կառավարության որոշմամբ զինվորական ծառայությունից ազատվել է 110 քաղաքացի: Եվս 369 քաղաքացի զինվորական ծառայությունից ազատվել է հետագայում՝ 2017 թվականից հետո:

5. 2018-2023 թվականի հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում Կառավարության որոշմամբ տարկետում է ստացել 1657 քաղաքացի հետևյալ հիմքերով՝
   - **գիտական-կրթական և գիտատեխնիկական՝ 1016**
   - **սպորտ՝ 301**
   - **կրթական՝ 286**
   - **մշակութային՝ 42**
   - **12 քաղաքացու դեպքում տարկետման հիմքը նշված չէ:**

1126 քաղաքացի տարկետում է ստացել միայն 1 անգամ, 240 քաղաքացի՝ 2 անգամ, 34 քաղաքացի ՝ 3 անգամ, 3 քաղաքացի՝ 4 և 1 քաղաքացի՝ 5 անգամ: 18 քաղաքացու տարկետում դադարեցվել է, ևս 235 քաղաքացի հետագայում ազատվել է զինվորական ծառայությունից: Միևնույն ժամանակ Կառավարության որոշման համաձայն 137 քաղաքացի ազատվել է զինվորական ծառայությունից, որոնցից 34-ը միանգամից են ազատվել ծառայությունից, 65-ը՝ 1 անգամ տարկետում ստանալուց հետո, 18 քաղաքացի ազատվել է զինվորական ծառայությունից 2-րդ տարկետումից, 19 քաղաքացի 3-րդ տարկետումից և 1 քաղաքացի 4-րդ տարկետումից հետո:

Այսպիսով, ամփոփելով Կառավարության որոշմամբ տրամադրված տարկետումների հաճախականությունը, կարող ենք արձանագրել, որ տարկետումները ամենաքիչ թիվը, Կազմակերպության ուսումնասիրության համաձայն, գրանցվել է առաջին երկու հնգամյակում՝ 1998-2002 և 2003-2007 թթ. համապատասխանաբար՝98 և 259 տարկետում, տրամադրված տարկետումների թիվը աճել է երրորդ հնգամյակում՝2008 – 2012 թթ. հասնելով մինչև 1057-ի, սակայն երրորդ հնգամյակում՝2013-2017 թթ. այն նվազել է մինչև 766 տարկետման, իսկ արդեն 2018-2023 թվականներին Կառավարության կողմից տարկետում ստացածների թիվը հասնել է 1657-ի, որից 1016-ը ՝61 %-ը, կազմում են գիտական-կրթական և գիտատեխնիկական հիմքով տարկետում ստացած քաղաքացիները: